



# ԱՆԱՀԻՏ

## ՀԱՆՐԻՍ ԱՄՍԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

Է ՏԱՐԻ

1905 ՓԵՏՐՈՒՍԻ

ԹԻՒ 2

ԲԱՐԻԶ

« Խօսք » եւ « լոյս » երկու համանման բառեր են նախնական սրբազան լեզուին մէջ : Եւ առանց պատճառի չէ այդ : Եոյսը կիրարկ մը բնութեան խօսքն է : Եւ խօսքն ալ մտքին լոյսն է : Տիեզերքը մտիկ կ'ընէ եւ կը պատասխանէ : Յախտնական խօսակցութիւն մը կ'անցնի բնութեան եւ հոգիին միջեւ : ԵՍէ հոգին չճարգմանէր , չլուսաւորէր ինչ որ միւսը կ'ըսէ , այդ չհասկցուած մտին բնութիւնը չեղածի պէս պիտի ըլլար :

Ժ. ՄԻՇԼԷ

Ա Ն Ա Հ Ի Տ

Բացում է բաժանորդագրութիւն ԵՍԹԵՐՈՐԴ ԵՐՉԱՆԻՆ ԿԱՆԻՍՏ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՊԵՏԻ Է ԿԱՆԻՍԻԿ ՎՃԱՐՆԵԼ

ԱՆԱՀԻՏԸ աւարտեց իր վեցերորդ շրջանը և կը մտնէ եօթերորդը :

ԱՆԱՀԻՏԻ գլխաւոր նպատակն եղած է միշտ՝ նպատակել իր ուժերուն ու միջոցներուն չափովը , հայ ժողովրդին բարոյական ու մտաւորական զարգացմանը : Պիտի շարունակէ այսուհետեւ , առաւել քան երբեք եռանդով , իր ջանքերը նուիրել այդ էական նպատակին :

Պիտի հրատարակէ 1. Խնամուած ու մանրակրկիտ ուսումնասիրութիւններ ազգային , գրական , գեղարուեստական , պատմական , իմաստասիրական , գիտական , ընկերական հարցերու վրայ . 2. Քննական ու կենսագրական յօդուածներ եւրոպական գրականութեան ու արուեստի մեծ գէմքերու և յատկանշական շարժումներու մասին , և թարգմանութիւններ արեւմտեան գրականութեան հատրտիր էջերու : 3. Ուսումնասիրութիւններ արեւելեան գրականութեանց մասին , և թարգմանութիւններ արեւելեան գրականութեան գեղեցիկ հասուածներու . 4. Բանաստեղծութիւններ , վիպակներ , հին ու նոր կեանքի պատկերներ , ըննական քրտնիկներ ժամանակակից հայ գրական ու գեղարուեստական բնորոշ երեւոյթներու մասին ևն . ևն :

ԱՆԱՀԻՏԻ խմբագրութիւնն այս առթիւ իր խորին շնորհակալութիւնը կը յայտնէ այն բոլոր աշխատակիցներուն որոնք հաճեցան ազնուաբար աջակցիլ և այսուհետեւ ալ պիտի աջակցին իր ջանքերուն և որոնց թիւն այժմ կը ստուարանայ քանի մը նոր ու կարեւոր աշխատակիցներով : Մեր ծրագրին համակրող և մեր ստանձնած գործին կարեւորութիւնն զգացող ուրիշ լուրջ մտքեր ալ՝ եթէ իրենց աջակցութիւնն ուզեն բերել կցել մեր ջանքերուն , վստահ կրնան ըլլալ որ ԱՆԱՀԻՏԻ մէջ պիտի գտնեն եզրայրական հիւրընկալութիւն : ԱՆԱՀԻՏԸ ազանգամով , անձկամիտ ու սահմանափակ հրատարակութիւն մը չէ . խմբագրութիւնն ունի իր որոշ համոզումները , ձգտումները և ուղղութիւնը՝ ամէն աեսակ հարցերու մէջ , բայց և սիրով կը հիւրընկալէ սարբեր ձգտումներէ ներշնչուած յօդուածներ , պայմանով որ լրջութեամբ և անկեղծութեամբ յղացուած ըլլան և գրական վայելուչ ձևով արտայայտուած : Եւ անձնիւր աշխատակից միմիայն իր յօդուածին պատասխանատուութիւնն ունի :

Կը խնդրենք մեր բաժանորդներէն որ միանգամ ընդ միշտ ըմբռնեն թէ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՊԵՏԻ Է ԿԱՆԻՍԻԿ ՎՃԱՐՆԵԼ : — Կը խնդրենք մեր գործակալներէն որ իրենց ջանքերուն մէջ ՓՈՒԹԿՈՏ ԸԼԼԱՆ որքան կարելի է :

Մեր ընթերցողներէն կամ բաժանորդներէն անոնք որ հինգ բաժանորդ գտնեն և բաժնեգինները կանխիկ գանձելով մեզի հասցնեն , պիտի ստանան ձրիաբոր ԱՆԱՀԻՏԻ 1905ի բոլոր թիւերը . անոնք որ սասը բաժանորդ գտնեն , պիտի ստանան ձրիաբար 1905ի և 1906ի ԱՆԱՀԻՏԸ և « Պէշիկթաշեանի ձառերն ու քերթուածները » :

# ԱՆԱԾԻՏ


Հ Ա Ն Պ Է Ս Ա Մ Ս Ե Ա Յ

Ազգային, Գրական, Գեղարուեստական

Է. ՏՄՐԻ

ՓԵՏՐՈՒՍՐ

Թ/Ռ 2



Ամերիկա

ԵՒ

Հայերը

Ոսթընի մէջ Յ—4 ամսէ ի վեր սկսած է հրատարակուիլ հովանաւորութեամբ և աշխատակցութեամբ Ամերիկացի կարևոր անձնաւորութիւններու, անդիւրէն պատկերազարդ հանդէս մը,

Armenia անունով, որ իրեն նպատակ ունի՝ Ամերիկացւոց ծանօթացնելով Հայոց պատմութիւնը, գրականութիւնը, գեղարուեստը, ազգային ու կրօնական հաստատութիւնները և Թուրքիոյ Հայոց տառապազին կացութիւնը, ամերիկեան հասարակութեան համակրութիւնները բազմապատկելի, զօրացնել և կազմակերպել հայկական դատին ի նպաստ (1) Այդ ամ-

(1) Հասցէ, Editor «Armenia», P. O. Box 2285, Boston, Mass. (U. S. A.). — Տարեկան բաժնեգին՝ 5 Ֆրանկ :

սաթերթը կը համապատասխանէ շատ էական պէտքի մը, և արդէն լոյս տեսած թիւերը իրենց այլազան ու լուրջ պարունակութեամբ յուսալ կուտան որ այդ հանդէսը պիտի լիովին իրագործէ իր նպատակը: Բացատրելէ առաջ թէ ինչո՞ւ այդպիսի թերթի մը երևուածը էական պէտքի մը համապատասխանող դէպք մը կը նկատեմ, թող ինծի թոյլ արուի մեր հասարակութեան ուշադրութիւնը հրաւիրել շատ շահեկան յօդուածի մը վրայ « Ամերիկացիք ի՞նչ ըրած են Հայոց համար » տիտղոսով, որ այդ ամսագրին երրորդ թիւին մէջ լոյս տեսած է: Ըմբռնելու համար թէ ինչո՞ւ և ի՞նչքան իրաւունք ունինք ազգային մէջ մեր ցաւերուն դարման մը յուսալու Ամերիկայէն, լաւագոյն միջոցն է նախ որոշապէս զիտնալ և կշռել ինչ որ մինչև ցարդ Ամերիկեան ըրած է մեզ համար:

Իր այդ յօդուածին մէջ, որուն ամբողջական թարգմանութիւնը կը հրատարակեմ Անալիսի այս թիւով, Պ. Պարթըն կը թուէ այն ծառայութիւնները զոր Ամերիկա մատուցած է հայ ազգութեան՝ իր միսիոնարներուն միջոցով: Այդ ծառայութիւնները իրական են, և անոնց բերած օգուտը շատ մեծ եղած է. Պ. Պարթըն իրաւունք ունի պարծնալու իրր Ամերիկացի՝ իր ազգին կատարած մարդասիրական ու քաղաքակրթական այդ հոյակապ գործին համար. կան միայն քանի մը կէտեր ուր Պ. Պարթըն՝ մեր ազգային հին ու ժամանակակից պատմութեան

ամբողջապէս ծանօթ չըլլալուն համար՝ սխալ-  
ներու մէջ ինկած է : Իր գլխաւոր սխալն այն  
է. որ նշանակած ատեն ինչ որ ըրած են ամե-  
րիկեան միսիոնարք Հայոց մտաւոր ու բարոյա-  
կան վերածնութեան գործին մէջ , չէ տեսած  
եւ չէ նշանակած ինչ որ իրենք իսկ Հայերը  
իրենց ինքնարուեստ ջանքերով ըրած են այդ մի-  
եւնոյն գործին շուրջ : Մեր երախտագիտութիւնը  
անսահման է Ամերիկացւոց մեղի մատուցած  
թանկագին ծառայութեանց համար , բայց մենք  
չենք կրնար ընդունիլ որ մեր մտաւոր վերա-  
կանգնումը կատարուած ըլլայ միմիայն օտար-  
ներու առաջնորդութեամբ , ոչ թէ լոկ այն  
պատճառով որ ատի մեր ազգային արժանա-  
պատուութիւնը կը վիրաւորէ , այլ որովհետեւ  
այդ չէ ճշմարտութիւնը :

Ճիշդ է որ ամերիկացի միսիոնարները հաս-  
տատած են առաջին կանոնաւոր եւրոպական  
դպրոցները Հայոց մէջ՝ թէ՛ Պոլիս եւ թէ՛ Հա-  
յաստան : Տաճկահայոց ժամանակակից պատ-  
մութեան նուիրուած շահեկան ուսումնասի-  
րութեան մը մէջ՝ (Փորձ, 1877) Ա. Երեցեանց  
այդ իրողութիւնը հաստատած է. «Նոքա («Պոր-  
տ»ի միսիոնարները) Բերա եւ Պէպէք թաղերում  
մեծ կալուածներ ձեռք բերին եւ գեղեցիկ շի-  
նութիւններ կանգնեցնելով գիշերօթիկ եւ ամէն  
կերպ բարեվայելուչ եւ բարեկարգ դպրոցներ  
բացին, ուր ձրի ընդունեցին հայ աղքատ սղայ-  
քը : Այդ դպրոցները բացուած ժամանակ Պոլսոյ  
մէջ Հայք ոչ միայն գիշերօթիկ դպրոց չունէին,  
ոչ միայն որք եւ անտէր տղայոց տէրութիւն  
անող չկար , այլ եւ բակերում գտնուած ծաղ-  
կոցները կամ վարժարանները սակաւաթիւ էին :  
Եւ ամենաթշուառ գրութեան մէջ : Հասկանալի  
է թէ ինչո՞ւ Հայոց աղայքը սերով գիմեցին  
միսիոնարների ձրի դպրոցները , ուր անգլիերէն  
ու գաղղիերէն էին սովորեցնում , մաթեմա-  
թիկայի եւ բնական գիտութեան դաստիարակու-  
թիւններ անում , եւն. եւն. : » Այդ միսիոնա-  
րական դպրոցներուն հետ մրցելու համար է որ  
Պալեան կարապետ ամիրային նախաձեռնու-  
թեամբ լուսաւորչական Հայք հիմնեցին Իւսկիւ-  
տարի ձեմարանը , տաճկահայ լուսաւորչական-  
ներու առաջին միջնակարգ վարժարանը : Ամե-  
րիկացւոց հիմնած դպրոցներէն եղած են ու կ'ել-  
լեն ցարդ բազմաթիւ սերունդներ լուսամբա ,

ուսեալ եւ բարեկիրթ Հայերու : Անոնց գոյու-  
թիւնը եղած է միշտ եւ է մինչեւ հիմա մեծ  
բարիք մը Հայոց համար՝ թէ՛ իրենց բերած  
ուղղակի օգուտով , եւ թէ՛ այն մղումով զոր  
կուտան լուսաւորչականներու դպրոցներուն  
բարեփոխմանը , յառաջացմանը համար : Բայց  
կրթական գործին մէջ Հայք ունեցած են ամե-  
րիկեան գործունէութենէն դուրս ուրիշ սատար-  
ներ ալ , բոլորովին անկախ , որոնց մէջ ամե-  
նակարեւոր տեղ մը կը բռնէ Մխիթարեանց  
գործունէութիւնը՝ ազգային , մտաւորական ու  
գեղարուեստական աւելի ընդարձակ նշանա-  
կութեամբ. պէտք է չմոռնալ նաեւ դպրոցական  
գործունէութիւնը Եւրոպա ուսած կամ նոյն իսկ  
Պոլսոյ մէջ եւրոպական կրթութիւն ստացած  
խումբ մը լուսաւորչական Հայ անձնաւորու-  
թեանց կողմէ հիմնուած՝ անկախաբար միսիո-  
նարական գործունէութենէն եւ որ ունեցած է  
իր ահագին ազդեցութիւնը :

Ճիշդ է նաեւ որ հայ իգական սեռին կըր-  
թութեան համար Ամերիկացի միսիոնարները  
ամենէն առաջ ջանքեր ըրած են թէ՛ Պոլսոյ եւ  
թէ՛ ու մանաւանդ Հայաստանի մէջ . եւ Պ.  
Պարթըն իրաւունք ունի այդ գործը Հայոց կըրած  
ամենամեծ բարիքներէն մին համարելու : Ամե-  
րիկեան այդ նախաձեռնութենէն ետքն է որ  
Կ.Փանոսեան «Ազգական օրիորդաց վարժարանը»  
հիմնեց , որուն յաջորդեցին յետոյ բազմաթիւ  
հայ աղջկանց վարժարաններ : Եւ սակայն այ-  
սօր իսկ , Պոլսոյ հայ իգական սեռին ունեցած  
կրթական մեծագոյն ու կանոնաւորագոյն հաս-  
տատութիւնը՝ Իւսկիւտարի Ամերիկեան Քոլէ-  
ճըն է :

Ինչ որ կ'ըսէ Պ. Պարթըն նոր բժշկականու-  
թեան Հայոց մէջ Ամերիկացւոց միջոցով մուտ-  
քին մասին, ճիշդ չէ ամբողջապէս : Ամերիկացի  
միսիոնարներուն Տաճկաստան մտնելէն առաջ ,  
արդէն գտնուած են Պոլիս հայ բժիշկներ, Իտա-  
լիոյ կամ Ֆրանսայի համալսարաններու մէջ  
կրթուած՝ իրենց ատենի բժշկական նորագոյն  
մեթոտներն ուսած. միսիոնարներու գալուստէն  
ետքն ալ՝ բազմաթիւ Հայեր շարունակած են ,  
հետեւելով արդէն բացուած ճամբուն , Եւրոպայի  
համալսարանները երթալով ուսնիլ բժշկութիւն,  
եւ այդ Հայերը եղած են Պոլսոյ լաւագոյն տե-  
ղացի բժիշկները. բայց այդ հայ բժիշկները բո-

լորն ալ Պոլիս հաստատուած են , եւ իրենցմէ զրեթէ ոչ որ մտածած է Հայաստանի մէջ ան- ձաւը տարածել իր մասնաճիւղին բարիքները . միսինարներուն հաստատած բժշկական վար- ժարանները , կնարբերդի մէջ՝ կարճատեւ , Պէյ- ըութի մէջ՝ ցարդ կանգուն (եւ որուն աշակերտ- ները Փոքր Հայքէն ու Կիլիկիայէն եկած Հայեր են մեծ մասամբ) , եւ անոնց հաստատած հիւանդ- դանոցները՝ Կեսարիոյ, Այնթապի, Մարսուանի, Մերտինի, Վանի մէջ , անհունապէս բարերար են եղած , եւ այդ սեղերը արդի բժշկականու- թեան մուտքը եւ կիրարկութիւնը իրօք զրեթէ միայն այդ միսինարական հաստատութեանց կը պարտինք :

Պ. Պարթըն իրաւունք ունի , ու մեծապէս , պարծենալու նաեւ Աստուածաշունչի աշխարհաբար թարգմանութեամբ, որ ամերիկեան մի- սինարներու հայկական գործունէութեան ամե- նէն շքեղ արարքներէն մէկն է : Այնպիսի ատեն մը երբ աշխարհաբարը կը գտնուէր անկազմ , անկերպարան , արհամարհուած եւ արհամարհելի վիճակի մը մէջ , ոմանց գրութիւններուն մէջ՝ չափազանց տաճկախառն , ուրիշներու ձեռքին տակ՝ չափազանց զբաբարախառն , Ամերիկացի մը՝ Տր. Րիկս՝ հին ու նոր Կտակարանը ամբողջ- լութեամբ թարգմանած է Պոլսոյ հայ ժողովրդ- եան բարբառով , զայն գործածելով՝ իր անխառն ու մաքուր շինուածքովը , այնպէս ինչպէս ժողովուրդը կերտած է զայն . արեւմտեան նոր հայերէնի առաջին յիշատակարանն է այդ թարգ- մանութիւնը՝ իրօք . եւ Տր. Րիկսի գործը ար- ժանի է ամէն հիացման : Կարելի է անշուշտ նկատել որ այդ աշխարհաբարը չափազանց ուժ- կակտն է , եւ ընազրին գրական վեհութիւնն ու ճոխութիւնը պահպանելու ջանք ցոյց չի տար . բայց Տր. Րիկսի բուն նպատակն էր՝ Աստուածաշունչը հասկանալի դարձրնել հայ ժողովրդին ու նոյն ատեն այդպիսի գործի մը մէջ սեւեռել Հայոց նոր լեզուն այնպէս ինչպէս ինքը զայն գտած էր ժողովրդին բերնին մէջ (վտարելով միայն՝ բնականաբար՝ տաճկերէն բառերը) . եւ այդ կրկնակ նպակակին լիովին հասած է : Միայն թէ՛ Պ. Պարթըն կը սխալի կարծելով որ այդ թարգմանութիւնը եղած է արեւմտեան աշխարհաբարը իբր գրական լեզու- հասարակութեան մէջ տիրապետել տուողը .

գործը արժանի էր այդ դերը կատարելու , բայց չէ կատարած . Տր. Րիկսի աշխարհաբար աստ- ուածաշունչին հրատարակութենէն ետքն է որ զբարարախառն աշխարհաբարի զպրօքը ամենէն աւելի զօրացած , ընդարձակուած եւ իր ամենէն այլանդակ ծայրայեղութեանց հասած է . այն աստիճան որ , Պայպլ Հաուզի վարչութիւնը ինքն իսկ վարակուած է այդ սխալ ուղղութե- նէն եւ մէկդի գնելով Տր. Րիկսի թարգմանու- թիւնը , Մատթիա Գարագաշեանին ձեռքով եւ անձոտնի աշխարհաբարով վերստին թարգմանել տուած եւ հրատարակած է Աստուածաշունչը . քանի մը տաճկահայ գրողներու մղած կուռ պայքարն է որ վերջ ի վերջոյ տապալեց զբա- բարախառն աշխարհաբարի զպրօքը եւ վերջնա- կանապէս հաստատեց արդի հայերէնին իբր գրա- կան լեզու տիրապետութիւնը . այդ գրագէտնե- րուն տարած յաղթանակն է որ առաջնորդեց վերջերս Պայպլ Հաուզի վարչութիւնը Գարա- գաշեանի թարգմանութիւնը մէջտեղէն վերցնել եւ վերստին հրատարակ հանել Տր. Րիկսի թարգմանութիւնը՝ գրական տեսակէտով քանի մը բարեփոխումներ մտցնելով . Պ. Պարթըն կը սխալի գարձեալ կարծելով թէ այդ աշխարհա- բար Աստուածաշունչը տարածուած է բոլոր Հայոց մէջ . շատ քիչ տարածուած ըլլալուն հա- մար է արդէն որ լեզուական հարցին լուծման մէջ չէ կրցած կատարել դերը զոր անոր կը վե- րագրէ Պ. Պարթըն . հայ-բողոքական հասարա- կութենէն գուրս՝ որ փոքր մաս մը կը կազմէ Հայութեան մէջ , շատ քիչեր այդ Աստուածա- շունչը կարդացած են . լուսաւորչական եւ կա- թոլիկ Հայերը այդ գիրքէն խորշած են ինչպէս « բողոքական » գրքէ մը , եւ նախընտրած են Աստուածաշունչ բնաւ չկարդալ քան « Պայպլ Հաուզի Աստուածաշունչը » կարդալ . եւ երբ- բեք կրօնական մոլորեանդութիւնը աւելի ապուշ չէ եղած քան այս պարագային . Պայպլ-Հա- ուզի Աստուածաշունչը բառական թարգմա- նութիւնն է հրէական եւ յունական բնագրե- րուն՝ լաւագոյն ձեռագիրներուն վրայէն կա- տարուած , հետեւաբար նոյն իսկ շատ աւելի ճշտութեամբ կը ներկայացնէ բնագրին իմաստ- ները քան մեր նախնեաց թարգմանութիւնը որ լեզուի դեղեկութեամբն է որ հոյակապ է եւ ոչ թէ բնագրին հետ բացարձակ ներդաշնակու-

թեամբ : Մեր կղերը յանցաւոր է այդ հարցին մէջ . ան պէտք էր ինքն իսկ յորդորէր բոլոր Հայերը անխտիր՝ կարգաւ այդ Աստուածաշունչը եւ օգտուիլ մտաւոր ու գրամական այն անագին զոհողութենէն զոր Ամերիկացիք ատով կը նուիրէին Հայութեան :

Պ. Պարթըն կը սխալի նաեւ ըսելով թէ ամերիկեան միսիոնարներուն տպարաններէն ելած են անգլիական գլուխ-գործոցներու թարգմանութիւններ. դժբաղդաբար ամերիկացի միսիոնարները գրական ձգտումներ չեն ունեցած , բարոյագիտութեան, կրօնքի, հմտութեան մարդիկ ըլլալով ամէն բանէ առաջ : Ամէն ինչ որ հրատարակած են , կրօնական , բարոյախօսական գործեր են , եւ կամ օգտակար ծանօթութեանց հաւաքածոներ : Պայպլ Հաուզն է որ հրատարակած է Պոլսոյ մէջ առաջին ստուգական լուրջ ամսաթերթը հայերէն լեզուով, Շեււարսն Պիտանի Գիտելեաց . բայց այդ հանդէսը , ինչպէս անունն ալ կը ցուցնէ , իրազեմտութեան տեսակ մը դասագիրք էր եւ ոչինչ ունէր գրական . մեծ ընդունելութիւն գտաւ սակայն այդ հանդէսը եւ շատ օգտակար եղաւ ու տարածուեցաւ բաւական . անոր հետեւելով եւ զայն գերազանցելու նպատակով է որ Հ. Գ. Այվազովսքի հիմնեց Բագրևայիպը . բայց ամէն ոք գիտէ թէ ազգային ու գրական տեսակէտով ի՞նչ նշանակութիւն ունեցաւ Բագրևայիպը , մինչ Շեււարսնը իր սահմանափակ վիճակէն դուրս չելաւ եւ շատ երկայն ալ չտեւեց . Աւեսաքէրը որ անոր յաջորդեց եւ կը տեսէ ցարդ , զուտ կրօնական ու բարոյախօսական է եւ բողոքականներու շրջանակէն դուրս երբեք չէ ելած : Գալով անգլիական կամ ամերիկեան գլուխ-գործոցներու թարգմանութեան, Պընիանի «Քրիստիանոսի ճամբորդութիւնը»ին թարգմանութենէն ուրիշ յատկանշական գործի մը երեւցած ըլլալը չեմ յիշեր միսիոնարական տպարաններէն . եւ այդ գործն ալ «կրօնական» է՝ թէպէտ գրական նշանակութենէ զուրկ չէ . նոյն իսկ Աղքար Թովմասի տակը , ամերիկեան գրականութեան այդ անմահ էջը, Ս. Ղազարու տպարանէն է որ լոյս տեսած է հայերէն թարգմանութեամբ : Միլտոնի Դրախտ կորուսեալը, մինչեւ իսկ Պայրընի Չայրս-Հարոյցը այդ նոյն հրաշալի Ս. Ղազարը ճանչցուցած է Հայերուն :

Կարելի է նոյն իսկ ըսել թէ միսիոնարները « գրական » տեսակէտով միասակար են եղած իրենց ազդեցութեան ներքեւ գտնուող Հայերուն . Հայոց արդի գրականութիւնը յօրինուած է միմիայն լուսաւորչական ու կաթողիկ Հայերու ձեռքով . ոչ մէկ բողոքական Հայ չկայ մեր ժամանակի գրական դէմքերուն շարքին մէջ . միակ հայ բողոքականը որ գրական յատկութեանց նշաններ տուած է , Պ. Ճէճիգեանն է , ծանօթ պերճախօսը . իր ատենաբանութիւններէն մէկ քանին , որ տպուած են, ճոխ ու վայելուչ ոճ մը եւ զմայլելի հայերէն մը կը յայտնեն . բայց ուսուցչական եւ քարոզչական գործունէութեան նուիրուած , Ճէճիգեան չէ կրցած ատեն գտնել զուտ գրական գործեր արտադրելու : Կարելի է յիշել նաեւ Պ. Միհրան Յովհաննէսեանը , որ ժողովրդական երգերու նմանողութեամբ բանաստեղծութիւններ գրած է , մէկ քանին յաջող , մեծ մասամբ գոեհիկ ու տափակ , ամբողջութիւնը՝ գրական ուժեղ եւ բնորոշ դէմք մը չի ներու անկարող : — Եւ սակայն , ո՛րքան որոշ ու կարեւոր բաժին մը կրնար ստանձնած ըլլալ մեր գրական գործունէութեան մէջ հայ բողոքական տարրը՝ եթէ գրական ձգտումը արթնցած ըլլար իր մէջ : Իր մասնաւոր կապերը անգլիական , ամերիկեան , գերմանական ազդերուն հետ , իր հմտութիւնը այդ ազդերու լեզուին՝ պէտք էր զինքը առաջնորդէր այդ մեծ ազդերու գրական գլուխ-գործոցները հայացնելու , ինչպէս եւ ինքնատիպ գործերով ցուցնելու հայ հասարակութեան մէջ մտաւորական մեծ հոսանքներն այդ ազդերուն : Ա՛յնքան քիչ բան թարգմանուած է անգլիական , գերմանական , ամերիկեան հրաշակերտներէն : Ա՛յնքան քիչ հաղորդակցութիւն եղած է այդ ազդերու մտաւոր հոյակապ կեանքին ու մեր հասարակութեան միջեւ . . . Յանկալի էր որ զէթ այսուհետեւ հայ բողոքականները սկսէին այդ դերը կատարել . հայ բողոքականներն ալ ունին նոյն արիւնը , նոյն ուղիղը ինչ որ ունին իրենց լուսաւորչական կամ կաթողիկ եղբայրները . իրենցմէ ալ անչուչտ կրնան ելլել գրագէտներ , եթէ իրենց մտաւոր դաստիարակութեան մէջ գեղեցկագիտական մտահոգութիւններն սկսին կարեւոր տեղ մը բռնել : Գրականութիւն մը այնքան

աւելի ճոխ ու հզօր կ'ըլլայ որքան՝ իր տոհմա-  
յին ինքնատուութիւնը զարգացնելով հանդերձ՝  
արտաքին մեծ գեղեցկութիւններ աւելի լայնօ-  
րէն ու այլազանօրէն ընդունի իր մէջ. գիտենք  
թէ ֆրանսական գրականութիւնը որքան կը  
պարտի իտալական, սպանիական, անգլիական,  
գերմանական գրականութիւններուն. մեր արդի  
գրականութեան մէջ ֆրանսական գրականու-  
թիւնը կը տիրէ գրեթէ տարամերժօրէն. միայն  
ռուսահայք են որ գերման ու ռուս գրականու-  
թիւններէն տարրեր — շատ քիչ՝ դժբաղդարար՝  
— կը բերեն մերթ մտցնել մեր գրականութեան  
մէջ. բողոքական Հայերը, որ գրեթէ բոլորն  
ալ ծանօթ են բողոքական մեծ երկիրներու լեզ-  
ուին, կոչուած են այդ երկիրներու մտայնու-  
թեան եւ գեղեցկագիտութեան փոխանցիչներն  
ըլլալ Հայոց մէջ: « Լոյս » հանդէսը, զոր քանի  
մը տարիէ ի վեր կը հրատարակէ Պ. Մինաս-  
եան, այդ ցանկալի գործունէութեան մէկ գե-  
ղեցիկ նախագուռը կը թուի արդէն. Պ. Մի-  
նասեան հայ բողոքական ընտանիքի մը կը պատ-  
կանի, ինչպէս եւ Պ. Մանկասարեան, որուն  
հետ մտաւոր հանդիսութիւններ ունի. երկուքն  
ալ բողոքական աշխարհին կրօնական-բարոյա-  
խօսական ոլորտէն մեկնած են, Ամերիկեան  
Համալսարաններու մէջ կազմուելէ յետոյ՝ տո-  
գորուած են բողոքական ազգերու քաղաքա-  
կըրթութեան ամենէն ազատ ձգտումներով, ու  
մին՝ ամերիկեան հասարակութեան մէջ ազա-  
տախոնութեան ամենէն հեղինակաւոր ու պեր-  
ճախօս ներկայացուցիչներէն մին է այսօր,  
միւսը այդ լայն ու ազնիւ ազատախոնութեան  
սկզբունքները, անոր վրայ հիմնուած աշխար-  
հայեցողութիւնը, բարոյականը եւ գեղեցկագի-  
տութիւնը կը հազորդէ հայ հասարակութեան՝  
պարզ, յստակ ու շնորհալի ոճով մը: Պ. Մի-  
նասեանի ամսաթերթը ամենէն համակրելի երե-  
ւոյթներէն մին է որ վերջերս յայտնուած ըլլան  
մեր մտաւորական աշխարհին մէջ, եւ արժանի  
է ընդարձակ տարածում գտնելու(1):

Գալով Պ. Պարթընի այն տողերուն ուր մի-  
սիոնարներու Հայ եկեղեցւոյ հետ վերաբերմանը

(1) Հասցէ՝ The Louyce Publishing Co.,  
23 Mass Ave. Arlington, Mass., (U. S. A.):  
Տարեկան բաժնեգիրն է 5 Թրաք:

մասին կը խօսի, այդ տողերուն վրայ եւս ան-  
հրաժեշտ է քանի մը վերապահումներ ընել:  
Կրնայ ճիշդ ըլլալ թէ միսիոնարները նախ եւ  
առաջ ուղած ըլլան ոչ թէ Հայերը մէկիկ մէ-  
կիկ Հայաստանեայց եկեղեցիէն անջատելով  
բողոքականութեան յարեցնել, այլ հետզհետէ  
բարենորոգումներ մտցնելով Հայ եկեղեցւոյն  
մէջ՝ զայն ամբողջապէս բողոքական դարձնել.  
բողոքականութիւնը տարածելու աւելի ճարտար  
եւ աւելի արմատական միջոց մըն է ատ: Եւ  
վայրկեան մը մտքէս չեմ անցըներ մեղադրել  
միսիոնարներուն՝ որ ցանկացած ըլլան Հայ  
եկեղեցին մօտեցնել բողոքականութեան. ո եւ  
է « համոզուած » մարդ իրաւունք եւ պարտա-  
կանութիւն ունի ջանալ որ ուրիշներն ալ յա-  
րին հաւատքի այն ձեւին զոր ինք ճշմարտա-  
գոյնը կը նկատէ. մեղադրելին այն է երբ իր  
համոզումը տարածել ուզողը ատոր համար կը  
գործածէ բռնի միջոցներ, կամ գժուծ միջոցներ  
(ինչպէս Չարդերու միջոցին պատահ մը հացի  
փոխարէն Հայերն իրենց ազգային եկեղեցին  
ուրանալու հրաւիրող կաթոլիկ միսիոնարներու  
ընթացքը): Ամերիկացի միսիոնարները քարոզ-  
չութեամբ, դպրոցներով, հրատարակութիւն-  
ներով է որ Հայերն իրենց գաղափարներն ըն-  
դունելու հրաւիրած են. նիւթական օգնու-  
թիւնները զոր ընծայած են յաճախ՝ անշուշտ  
մեծ տեղ կը բռնեն իրենց գտած յաջողութիւն-  
ներուն մէջ. բայց այդ ալ դժուար է մեղադ-  
րելի գտնել. սովամահին, սուրէ ազատածին  
« բողոքական եզիր որպէս զի հաց տամ » չեն  
ըսած անոնք. այլ ձրի դպրոց շնորհած են ազ-  
քատ տղոց, ատոնց հայրերուն օգնած են, գործ  
գտած են, կիրականօրեայ վարժարան բացած են  
(առաջին անգամ ըլլալով Հայոց մէջ)՝ ազէտ  
գործաւորներու, բեռնակիրներու, արհեստա-  
ներու գրել կարդալ սորվեցնելու համար. այն  
Հայերը որ թէ՛ մտաւոր, թէ՛ նիւթական այս-  
քան լայն աջակցութիւն կը գտնէին այդ օտար-  
ներէն՝ բնական է որ յարէին անոնց եւ դիւ-  
րաւ ընդունէին անոնց կրօնական գաղափար-  
ներն ալ. մեղադրելին մեր կղերն էր որ ինքն  
իսկ չէր ըրած ինչ որ այդ օտարները կ'ընէին:  
Հայ կղերը մերժեց միսիոնարներու փափաքած  
« բարենորոգումները » ընդունիլ եւ սկսաւ նոյն  
իսկ հալածել այն Հայերը որոնք՝ հայ եկեղեցիին

քաղաքականապէս կապուած մնալով հանդերձ՝ կրօնականապէս արդէն բողոքականութեան կը պատկանէին . Յակոբոս Պատրիարքը 1839ին գաւառներն արտօրել առաւ շատ մը բեղոքական Հայեր , նոյն իսկ բողոքական չեղող բայց պարզապէս ազատամիտ Հայեր , ու եկեղեցւոյ բեմէն նզովեց Լուսերն ու իր աղանդը , իսկ Մատթէոս Պատրիարքը 1846ին բանազրեց հայ բողոքականներէն ոմանք (որոնք ծայրայեղ մուլեոանդութեամբ կը յարձակէին Հայ եկեղեցւոյ դէմ եւ կը նախատէին զայն) , բայց ինքն ալ հակառակ ծայրայեղութեան երթալով՝ կոնդակով մը , ուր գործածած է « կծու եւ անվայել ոճ » , ինչպէս կը գրէ Երեցեանց , անիծեց բոլոր բողոքական Հայերը , պատուիրեց լուսաւոր աւկաններուն « վերջացնել նոցա հետ թէ՛ ազգականութիւնը , թէ՛ բարեկամութիւնը եւ թէ՛ մարդասիրութիւնը , եւ մինչեւ անգամ նոցա հետ ոչ խօսիլ , ոչ առնուլ , ոչ տալ , եւն . » : Այն ատեն է որ յառաջ եկաւ անջատում մը , որ սակայն ըստ իս նախընտրելի էր քան այդ խառնաչիտիլ եւ երկզիմի կազութիւնը , որ ներքին պառակտումի բաւական տխուր ու ծանր հանգամանք մը ստացած է պահ մը՝ բարեբաղդաբար շատ կարճատեւ . ինչ որ էական է ինծի համար եւ միսիոնարներուն իրապէս պատիւ կը բերէ , այն է որ այդ անջատումը եղած է զուտ կրօնական եւ ոչ երբեք ազգային . հայ բողոքականները պէտք չեն ունեցած Պէշիկիթաշլեաններու որ իրենց բացատրէին թէ ազգութիւն եւ կրօնք տարբեր բաներ են . անոնք միշտ « Հայ » մնացած են , միշտ յարգող իրենց ազգային լեզուն ու պատմութիւնը , զուտ-ազգային բոլոր հարցերուն մէջ ազգին ամբողջութեանը հետ միշտ եղբայրաբար կապուած :

Պ. Պարթընի տողերը հայ կղերին նկատմամբ ճիշդ են դժբաղդաբար : Այն միջոցին երբ միսիոնարները եկան Տաճկաստան , գտան հայ կղեր մը որ — մատի վրայ համրուող բացառութիւններէ զատ — կը փայլէր խոր տգիտութեամբ , նոյն իսկ տգիտութիւն՝ կրօնական իրերու մէջ , եւ որ կը կարծէր՝ ինչպէս իրաւամբ կը գրէ Պ. Պարթըն՝ թէ աղօթքներ գոց արտասանելը կը բաւէ « կրօնական պարտականութիւնը » կատարելու համար : Ուսեալ կղերականներ պատրաստելու մասին ոչ մէկ

հոգ չէր տարուած : Ո եւ է արհեստի մէջ յյաջողած յետին խանութպանը քահանայ կամ վարդապետ կ'ըլլար : Այսօր այդ տխուր կացութիւնը բաւական բարեփոխուած է , — թէպէտ երբեք հին վիճակէն շատ բան մնացած է տակաւին : Այդ բարեփոխութեան անշուշտ մեծապէս նպաստած է միսիոնարներու գործունէութիւնը , իրենց տուած անձնական օրինակով իսկ մղելով հայ լուսաւորչական հասարակութիւնը ունենալու զարգացած կղերականներ : Պ. Պարթըն իրաւունք ունի դարձեալ « բարենորոգումներ » ու մուտքը բաղձալու մեր եկեղեցւոյն մէջ : Այդ բարենորոգումներէն ու մանց ներմուծումը ես իսկ՝ առանց միսիոնար ըլլալու՝ խորապէս կը բաղձամ : Հետզհետէ ջընջել պատկերներու պաշտումը (1) որ հակաքրիստոնէական է եւ մասնաւորապէս հակառակ Հայոց եկեղեցւոյն ոգիին , աւետարանը եկեղեցիներուն մէջ աշխարհաբար կարգալ , կուսակրօնութիւնը վերջնել (հետեւելով նոյն իսկ Հայ եկեղեցւոյ առաջին հայրապետներուն որ ամուսնացած էին) կամ գէթ զայն վերապահել միմիայն վանականներուն որոնք հասարակութեան հետ յարաբերութիւն չունին այլ ինքզինքնին կը նուիրեն մենութեան , խովման եւ ուսումնասիրութեան կեանքի մը , — առնք տրամաբանական եւ առողջ պահանջներ են որոնց լրացումը օգուտ միայն կրնայ բերել թէ՛ մեր ժողովրդին եւ թէ՛ մեր եկեղեցւոյն : Կարելի է միայն դիտել տալ Պ. Պարթընին թէ , հակառակ մեր կղերին բոլոր թերութիւններուն՝ Հայ եկեղեցին յարաբերաբար միշտ աւելի «քրիստոնէական» է մնացած քան միւս «պատմական» եկեղեցիներէն ամենանշանաւորը , այն է Հռոմէական եկեղեցին , ամենէն հակաքրիստոնէական եկեղեցին որ գոյութիւն ունեցած ըլլայ երբեք : Կարելի է նաեւ աւելցնել թէ այդ բարենորոգումները՝ մեծ մասամբ՝ մտցնելու համար կը բաւէ արդէն մեր եկեղեցւոյն սկզբնա-

(1) Անուրանալի է որ պատկերներու պատկերներ՝ ամենավայրենի ֆեթիւապատկերներու ձեւերով՝ գոյութիւն ունի մեր մեզ : Այս ինչ տեղի (օրինակ՝ Արմաշի) Ասուածածնայ պատկերը մասնաւորապէս զօրաւոր ու ցաւերու բուժիչ կը նկատուի ժողովրդին :

կան կարգուսարգը, օրէնքները, ոգին՝ որ օտար ներդրութիւններով մեծապէս եղծուած են՝ ամբողջութեամբ վերահաստատել :

Պ. Պարթըն կը սխալի վերջապէս յայտարարելով թէ միմիայն ամերիկացի միսիոնարներն են որ ճանչցուցած են քաղաքակիրթ աշխարհին 1895-96ի հայկական աղէտները : Ամերիկացի միսիոնարները շատ մեծ բաժին մը ունեցած են այդ անդեկատուութեան գործին մէջ . բայց այդ դերը կատարած են նաեւ Ֆրանսացիներ , Դերմանացիներ , Տանիմարքացիներ , Անգլիացիներ , ինչպէս եւ հայ եկեղեցական իշխանութիւնները եւ աշխարհական գործիչ խումբերը եւ անհատներ : Ճիշդ է սակայն որ օտարներէ Հայ արկածեալներուն զրկուած նըպաստներուն ամենէն ստուար մասը Ամերիկայէն է եկած եւ թէ այդ արհաւիրքի եւ ցաւի օրերու միջոցին Ամերիկացիները Հայաստանի մէջ ցոյց տուած են՝ թերեւս աւելի քան ո եւ է օտարներ՝ սրտազին ցաւակցութիւն , տարապայման անձնուիրութիւն , զուտ մարդասիրական գիտութիւն :

Ահա ինչ որ Ամերիկացիք ըրած են մեզի համար : Վերապահումները՝ զոր ըրի՝ անոնց մեզի մատուցած ծառայութիւններուն արժէքը նուազեցնելու նպատակը չունին երբեք : Ճշգրտելով ու որոշուելով, ծառայութիւնները զոր Ամերիկացիք մեզի մատուցած են եւ կը մատուցանեն ցարդ , անհուն արժէք ունին նորէն . ու մենք իրենց համար երախտագիտութիւնէ եւ հիացումէ ուրիշ զգացում չենք կրնար ունենալ : Այդ տեսակէտով , ես նոյն իսկ կը ցաւիմ որ այդ յօգուածը Armeniaին մէջ Ամերիկացիէ մը գրուած ըլլայ : Հայ մը գրելու էր զայն . այդպէսով Հայ ժողովուրդն իր շնորհապատուութիւնը հրապարակաւ եւ հանդիսաւորապէս յայտնած կ'ըլլար ամերիկեան ժողովրդին , ու նաեւ աւելի որոշ կերպով սահմանուած կ'ըլլար Ամերիկացուոց կատարած հայանպաստ գործը :

Այսօր ամերիկեան այդ հայանպաստ գործը որ զուտ կրթական ու կրօնական էր ցարդ , քաղաքական հանգամանք ալ սկսած է ստանալ : մեր հարցին լուծման Ամերիկայի պէս հզօր ու կտրուկ տէրութեան մը ուզողի մասնակցելու տրամադրութիւնը՝ վերջին ժամանակներու ամենէն յատկանշական ու կարեւոր դէպքերէն մին է :

Այդ դէպքը արգիւնքն է դարձեալ միսիոնարներու ազդեցութեանը որ շատ մեծ է Ամերիկայի մէջ . Տաճկաստան գրտնուող ամերիկացի միսիոնարները 1895էն ի վեր իրենց կառավարութեան հաղորդած են բոլոր հարստահարութիւնները, վայրագութիւնները որոնց ականատես են եղած, բողոքած են այդ խժգժութեանց դէմ , բացատրած են թէ իրենց կրթական գործունէութիւնը չի կրնար անխափան շարունակուիլ այդպիսի այլանդակ պայմաններու մէջ , եւ հրաւիրած են իրենց կառավարութեան միջամտութիւնը : 1896ին , միսիոնարներու այդ ջանքերուն շնորհիւ , շատ բուռն հայասիրական շարժում մը երեւան եկաւ ամբողջ Միացեալ-Նահանգներուն մէջ . հասարակութիւնը սաստիկ զայրացած էր եւ կը պահանջէր կառավարութիւնէն միջամտել կորովի կերպով՝ վերջ դնելու համար այդ բարբարոսութեանց . թերեւս տեղի ունենար այդ միջամտութիւնը, եթէ նոյն միջոցին Քուպայի հարցը չպայթէր . ամբողջ այդ ոգեւորութիւնը յանկարծ Հայաստանէն դէպ ի Քուպա դարձաւ եւ բաղձացուած ու հասունցած միջամտութիւնը Քուպայի ի նպաստ է որ կատարուեցաւ : Երկու երեք տարիէ ի վեր հայասիրական շարժում մը վերստին սկսած է ուրուագծուիլ Ամերիկայի մէջ , նուազ ուժեղ , բայց տեսական ու յարածուն : Նորէն միսիոնարներն են զայն ներքնապէս յարուցանողն ու անուցանողը . անոր տարածուելուն նպաստեցին Ամերիկայի հայ գործիչներն ու հայասէր ամերիկացի անձնաւորութիւններ ինչպէս Օր. Ալիս Սթոն Պլաքուել , տիկին Ճիւլիա Հաու , եւն. եւն. որոնք երկու տարիի չափ առաջ Պոսթընի մէջ կազմեցին « Հայաստանի Բարեկամներ » անուանուած ընկերութիւն մը , հայկական դատին շուրջ ամերիկեան համակրութիւնները բազմապատկելու համար ջանքեր ընելու նպատակով : Այդ բոլոր մղումներուն հետեւանքով է որ Միացեալ Նահանգաց կառավարութիւնը որոշեց Իզմիրի առջեւ նաւային ցոյց մ'ընել՝ Թուրք կառավարութիւնն ստիպելու համար որ ընդունի իր պահանջները : Այդ պահանջներն էին՝ 1. Պուսոյ Ամերիկեան ներկայացուցիչը բարձրացնել դեսպանական աստիճանի , հաւասար եւրոպական

դեսպաններուն, հետեւաբար եւ իրաւունք ունեցող Օսմ. Պետութեան բոլոր հարցերուն միջամտելու. 2. Հատուցում այն նիւթական վրնասներուն զոր Տաճկաստանի մէջ գանուող ամերիկեան հաստատութիւնները կրած էին ջարդերու միջոցին. 3. Տաճիկ կառավարութիւնը պէտք է իբր Ամերիկացի նկատէ այն թրքահրպատակները որ Ամերիկա երթալով Ամերիկեան հպատակ արձանագրուած են եւ անոնց Տաճկաստան դառնալուն եւ իբր Ամերիկացի հոն հաստատուելուն չընդդիմանայ. 4. Թուրք կառավարութիւնը պէտք է ամէն ազատութիւն եւ գիւրութիւն չնորհէ ամերիկեան դպրոցներուն կանոնաւոր զարգացման եւ թոյլ տայ անոնց թուոյն մինչեւ 300ի բարձրացման: Ասոնք արտաքուստ լոկ ամերիկեան շահեր չօշափող պահանջներ կը թուին. բայց մօտէն դիտուելով այդ պահանջները կ'երեւան ա'յնքան հայկական շահերուն նպաստաւոր որքան ամերիկեաններուն: Տաճկաստան զարձոյ ամերիկահպատակները՝ Հայ են գրեթէ բոլորն ալ, Տաճկաստանի ամերիկեան դպրոցներու աշակերտները մեծ մասամբ Հայ են. ասոնք պաշտպանել՝ Հայութեան մէկ բաժինը պաշտպանել ըսել է. ու երբ դպրոցներու թիւը բազմապատկուի, եւ երբ Պոլսոյ մէջ Ամերիկա ունենայ լիազօր դեսպան մը՝ Տաճկաստանի ներքին գործերուն միջամտելու իրաւունք ունեցող, կ'ըմբռնուի թէ Ամերիկեան հայաստան գործունէութեան այս նոր փուլը մինչեւ ո'ւր կրնայ երթալ օր մը: — Պահանջներն ընդունուեցան մասամբ: Բայց Ամերիկա յամառ է եւ հետեւողական. ծրագիր մը երբ գծէ, այլ եւս զայն չի ձգեր անաւարտ: Կրնանք յուսալ որ Իզմիրի ցոյցը առաջին քայլն էր ապագայ կարեւորագոյն արարքներու:

Հայոց պարտականութիւնն է խրախուսել, հրահրել ամերիկեան այդ համակրութիւնները, իրենց ուժերուն չափովը՝ նպաստել անոնց զօրացմանն ու ընդարձակմանը: Իզմիրի ցոյցէն անմիջապէս յետոյ, ես պարտք համարեցայ իբր հայ անհատ մը եւ իբր ներկայացուցիչ մը հայ մամուլին՝ Պ. Ռուզվէլթին եւ Պ. Հէյնի ուղղուած նամակներով (որոնց սուսջնոյն թարգմանութիւնը կը հրատարակեմ այս թիւով) արտայայտել մեր ժողովրդին երախտագիտութիւ-

նը, թէ՛ միսիոնարներու ցարդ մեզի մատուցած ծառայութեանց եւ թէ՛ այժմ պաշտօնակիսն Ամերիկային մեր ազգութեան ի նպաստ առած քալերուն համար: Նմանօրինակ ուղերձներ զրկուեցան կարծեմ նաեւ Ամերիկայի Հայ խումբակներէ: Վերջապէս, Սարաճեան եւ Այվատեան Արքեպիսկոպոսները ամենայն Հայոց Հայրապետին եւ ամբողջ ազգին կողմէ՛ յայտնեցին միեւնոյն զգացումները, եւ դտան Պ. Ռուզվէլթին կողմէ՛ շատ սիրալիր ընդունելութիւն մը:

Վերջնատրուելէն յետոյ Ամերիկեան Համաժողովին ուղղած իր թուղթին մէջ, Պ. Ռուզվէլթ սա նշանակալից սողերը կը նուիրէ՛ Տաճկահայոց հարցին. « Թուրքիոյ մէջ մեր ունեցած դժուարութիւններուն պատճառը ոչ այնքան այն վարմունքն է որուն կրեմնն կ'ենթարկուին մեր քաղքենիները որքան այն զայրոյթը զոր մեր մէջ անխուսափելի կերպով կը գրգռէ ահաւոր յոռի կառավարութիւնը, որ կը տեսնուի Հայաստանի մէջ (ինչպէս եւ Մակեդոնիոյ մէջ): »

Այն հրէշային պատճառները որ այդ « զայրոյթը » կը պատճառեն Ամերիկեան կառավարութեան, հեռու են ջնջուած ըլլալէ: Ներելի է յուսալ որ պիտի գայ այն օրն ուր այդ զայրոյթը պիտի արտայայտուի վճռական արարքով մը:

Անմիջական ու ծայրայեղ սկիւզուութիւններով չբորբոքինք. բայց խնամքով ու դոհու-նակութեամբ նշանակենք այդ դրական տարրը որ կուգայ աւելնալ մեր հարցին շուրջ: Ամերիկացիք՝ առանց որ մենք իրենցմէ ոչինչ խնդրած ըլլայինք՝ ինքիքենինն եկած են զէպ ի մեզ, ու դարէ մը ի վեր ահագին զբամ ծախսած, միտք յոգնեցուցած, ու մեզի բարոյական անգնահատելի ծառայութիւններ մատուցած են: Կարուկ, չիտակ ու կորովի նկարագրով մարդիկ են անոնք, կը պատկանին ամենէն հիօր տէրութեան որ կայ այս վայրկեանին աշխարհիս վրայ եւ որ իր կուտակուած վիթխարի ուժը կ'ուզէ տարածել ամէն կողմ եւ « զայն՝ ինչպէս կը գրէ Ռուզվէլթ՝ գործածել արգարութեան եւ իրաւունքի յաղթանակին »: Անոնք — մասնաւորապէս միսիոնարները, որոնք ուղղակի շիման մէջ մտած են մեր ժողովուրդին

հետ, — կը սիրեն Հայերը . կարելի է նոյն իսկ ըսել թէ բոլոր օտարներէն անոնք են որ ամենէն աւելի մտերմօրէն կը սիրեն Հայերը, կը ճանչնան զանոնք եւ սրասնց կ'ուզեն անոնց բարձրացումն ու փրկութիւնը. այդ միսինսարներէն մին որ իր գրեթէ բովանդակ կեանքը ճաճկահայոց մէջ անցուցած է, կ'ըսէր վերջերս՝ Պոսթըն՝ ատենախօսութեան մը մէջ՝ « Կը սիրեմ Հայերը, եւ ինքզինքս Հայ կը զգամ, ու հպարտ եմ ինքզինքս Հայ զգալուս : » Այդ ազնիւ եւ խորատես գործիչները նկատած են ինչ որ կայ առողջ, ուշիմ, կրակոտ՝ մեր դարու ստրկութեամբ ապականուած ցեղին հոգւոյն խորը . կը գնահատեն զայն, եւ կ'ուզեն փրցնել ստրկութեան կեղեւը ամբողջապէս : Կրնանք յուսալ որ անոնք իրենց այդ գործը պիտի տանին հասցնեն մինչեւ վերջնական եզրակացութիւնը : — Սասունի եւ Մուշի վերջին ազիտորմ գէպերու միջոցին, հարբերդի ամերիկեան հիւպատոսը՝ Տր. Նորթըն, շատ աւելի եռանդուն հայանպաստ գործունէութիւն ցոյց տուաւ քան եւրոպական պետութեանց մեծ մասին ներկայացուցիչները :

Ամերիկեան կառավարութեան այդ նոր զիրքը՝ Օսմանեան պետութեան հանդէպ, ամէն պարագայի մէջ՝ սա երկու արդիւնքէն մէկը պիտի ունենայ : Կա՛մ Ամերիկա պիտի կատարէ վճռական քայլը, ու Եւրոպա՝ անկարող զայն արդիւնելու, պիտի հետեւի անոր եւ մասնակցի : Եւ կամ, Եւրոպա, որ չ'ուզեր թոյլ տալ Ամերիկայի՝ իր զօրութիւնն ու արքայապետութիւնը տարածել Հին Աշխարհին մէջ, ինքն իսկ պիտի ստիպուի Արեւելեան հարցին լուծումը փութացնել, միջամտութեան պատճառ չձգելու համար Ամերիկայի : Երկու պարագային՝ ալ մենք կարող ենք օգտուիլ :

Ջանանք ընել ամէն ինչ որ կրնանք՝ բազմապատկելու համար ամերիկեան համակրութիւնները, որոնք ինչ ձեւով ալ իրականանան՝ մեզի համար միշտ բեղմնաւոր եւ բարերար պիտի ըլլան :

ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ

# Ա հ աւ ա ս ի կ

Ահաւասիկ ջրախօսիկները որ ստուերներուն կ'երթան, Խարխալիէն, այլակալիօրէն, Ու կը խնդան, ու կուշան դեռ :

Ահաւասիկ հոգիին բոխախաւորները, ի՛նչֆան Ռեժարաի, ու բախժոս, զոր կը սպառեն Անկարեղիին խօջ սեւեղեր :

Ահաւասիկ միսիկները, գրուխիկն ծուած, եւ մուսը, Որ գերմարդիայիկը միշտ կը փնտնեն, Ենկեղով աղօթիկներ խօջ :

Ահաւասիկ ստուիկներն, երկիրպագուներ, որ յաւնախայ կը հասնին կրօնիկն ոսֆն արդէն, Աւեւեֆն ալ պաշտարուդ :

Ահաւասիկ անբոխիկն մեջ սիւնիկներն ալ, օր օրի Զասցած, որ կը բոքովեն ուսերիկն, Եւ ինֆգիւնֆիկն կ'ուրանան :

Ահաւասիկ միսֆի սնանկներն, հանձարներ խաւարի, Որ իրենց ճառերուն վրայ կը ծիծաղին Իրենֆ կախ, եւ ո՛րֆան :

Ահաւասիկ ճանձարացածները, սիրեղիկն ու ապրեղիկն, Որ արդէն իսկ մեռնիկ կը սկսին, Յոգնած ու կեանֆիկն դժգոհ :

Ահաւասիկ նաեւ փոքրերը, խեղճեր զոր կ'այլայլեն Բիրս ցաւերն այս կեանֆիկն սուս եւ սին, Գլխիկոր՝ իբրեւ գոհ :

Ահաւասիկ իմ սիրսս ալ, զոր չի հասկցայ բնաւ, Եւ իմ հոգիս՝ յանախուած ցեորֆիկն, Եւ անձս հաւնալ՝ ֆանդուեղու հաւնար :

Ահա, ահա աշխարհը, ուր ամեւեֆն ալ կարգաւ Միւրեւոյն սառապակֆը կը հերկեն, Զի հասկնաղիկն իրար :

ՎԱՀԱՆ ՄԱԼԷՉԵԱՆ

# Ս. Էջմիածնի Սինոդի մի նոր կարգադրութեան առթիւ

**Կ**ովկասի հայ պարբերական թերթերի մէջ հրատարակւած է Ս. Էջմիածնի Սինոդի յետագայ կարգադրութիւնը. « Հրաման ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՌՈՒՍԱՑ Ի Լուսաւորչական Հայոց Սինոդի Սրբոյ Էջմիածնի :

Ըստ հրամանի ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ի Սինոդիս լուսան գայտարարութիւն թեմակալ առաջնորդին Հայոց Աստրախանի, ի 4 հոկտեմբերի տարւոյս թ. 154, որ ունի գայս օրինակ. « Իրականութիւն էր արդէն, վկայեալ ի բազմաց բազում անգամ, զի վերական անուանեալ հիւանդութիւնք ամենուրեք ծաւալ մեծ ընկալեալ ի ժողովրդականս մեր թէ ի քաղաքացիս եւ թէ ի գիւղականս անգամ թիւնաւորեն եւ քայքային գփիղիքական եւ բարոյական կազմ կենաց եւ բարգաւաճման ներկայ եւ ապագայ սերնդեան : Հետեանք այդպիսոյ ծանր աղետ չարեաց է եւ այն՝ զի օր ըստ օրէ բազմանան ինդիքք պսակաւուծութեան ի հոգեւոր ատեանս մեր այնպիսիք, որք չարժանիք ծագման իւրեանց ունին զախաւուրութիւն առն եւ զվարակումն կնոջ : Որք ի սրտէ եւ ըստ պարտուց կոչեցեալք են ի ծառայել հասարակութեան, բժիշկք եւ հրապարակասօք, ի վերջին ժամանակս իբրեւ զմի ի փրկարար միջոցաց համարեն պահանջել յարանց, մտանդաց յամուսնութիւն, զբժշկական վկայական վասն առողջութեան : Չիրագործումն այսպիսեոյ օգտակար առաջարկութեան գտանելով ժամանակակից պէտք անհրաժեշտ՝ պատիւ ունիմ խոնարհաբար ինդրելոյ զհաւանութիւն Սինոդոսիդ Ս. Էջմիածնի վասն սահմանելոյ ի վիճակիս զպահանջումն բժշկական վկայականի վասն առողջութեան արանց, ինդրողաց զիրաւունս ամուսնութեան » : ՀՐԱՄԱՅՆԻՆ — առեալ ի նկատ, զի յաճախ գէպք լինին, յորժամ մտանդքն յամուսնութիւն վարակեալ գտնով վննեցական արտիւք, վարակեն յետ ամուսնութեան եւ զկենակիցս իւրեանց, լինելով պատճառ քայքայման առողջութեան նոցա եւ զաւակաց ծնելոց յայդպիսեաց ամուսնութեանց եւ իբրեւ անմիջական հետեանք այդորիկ յերեւան գան անբաղդութիւն եւ կործանումն ընտանեաց, յաճախ լինելով առիթ եւ պատճառ ամուսնալուծութեան. ուստի Սինոդս պատուիրէ թեմակալաց վիճակաց առնել այսուհետեւ սնորէնութիւն ըստ թեմից իւրեանց պահանջել յարանց բնակելոց ի քաղաքս եւ ի մտանելն նոցա յամուսնութիւն զվկայութիւն բժշկի վասն առողջութեան նոցին եւ ապա տալ

հրաման ամուսնութեան նոցա. իսկ յանձանց բնակելոց ի գիւղօրայս պահանջել զնոյնպիսի վկայականս բժշկի, եթէ գոն հարաւորութիւնք առ այն : Ի 13-ն Նոյեմբերի 1904 ամի ի Ս. Էջմիածնի : »

Մեր կողմից գտնոււմ ենք յիշեալ կարգադրութիւնը աննպատակայարմար եւ Սինոդի իրաւասութեան սահմանից դուրս յետագայ պատճառներով :

Նախ՝ Մեր եկեղեցու յետին անգամին եւս յայտնի է, որ հիւանդութիւնը չէ ընդունուում պատճառ ամուսնալուծութեան : Եւ վննեցական ակար ոչ թէ ինքնին իբրեւ հիւանդութիւն է հանդէս գալի ամուսնալուծութեան պահանջով, այլ իբրեւ պարզ ապացոյց ամուսնիներեց մէկն ու մէկի ամուսնական անհարաւարեութեան : Ուրեմն ամուսնալուծութեան պատճառը հիւանդութիւնը չէ, այլ շուտիւնը, պոռնկութիւնը : Երկրորդ՝ Եթէ հիւանդութիւններն ընդունւէին իբրեւ հիմք ամուսնալուծութեան, ինչո՞ւ պէտք է բաց մնային թոքախտաւորները, ալկոհօրիկները, լուսնոտները եւայլն :

Երրորդ՝ Ո՞ւր եւ ո՞րտեղի բժիշկներն ու հրապարակասօսներն են համարել ամուսնացողներեց, այն էլ միայն այրերից, բժշկական վկայական պահանջելը փրկարար միջոց : Մեր մամուլի մէջ այդպիսի պահանջների մասին չենք կարդացել. իսկ աւելի քաղաքակրթւած աշխարհներեց եւ ոչ մէկոււմ այդպիսի կարգադրութիւն չկայ եղած :

Չորրորդ՝ Եթէ բժշկական վկայական պահանջելը փրկարար միջոց է, ինչո՞ւ այն ժամանակ պահանջել միայն այրերից : Բժշկի վկայականով ամուսնացած այրը, եթէ մի քանի ժամանակից յետոյ վարակի ու վարակի իր կնոջը — չէ՞ որ լիակատար միջոց կունենայ ապացուցելու, որ իր կինն է իրեն վարակել, քանի որ ինքը ամուսնութեան ժամանակ ունեցել է ապացոյց իր առողջութեան, իսկ կինը չէ ունեցել : Ո՞ւր կը մնայ արդարութիւնը :

Հինգերորդ՝ Ի՞նչ են ասում վիճակագրական թեմանշանները. վարակուելը անուսնութիւնից միայն առաջ է շիկուել քե մեծ մասաւր յետոյ : Բայց մեզանում ո՞վ է այդ խեղճ թեմանշաններին արժէք տալի կամ ո՞վ է ինդիք յարուցանելուց ու վճռելուց առաջ ուսումնասիրողը : Պրպտեցէք կենաց դրքի էջերը եւ կը տեսնէք որ ամուսնացողներեց անհամեմատ մեծամասնութիւնը վարակւած են առողջ ամուսնութիւնից յետոյ : Վարակւած քաղաքացին չը բժշկւած՝ չի ամուսնանալ, իսկ գիւղացիք պսակուում են շատ կանուխ :

Վեցերորդ՝ Քրիստոնէական եկեղեցին բժշկութեան հիմք ընդունում է հաւատը (լաւ է

այդ թէ ոչ — այլ խնդիր է): Ի՞նչ ասելով այսօր եկեղեցականը եկեղեցական իշխանութեան ձեռքով եկեղեցական սահմաններում տարամերժում է այդ հիմքը եւ տալիս է այն միայն աշխարհիկ գիտութեանը: Իրանով չէ՞ սոււում, որ մենք՝ հոգեւորականներս կորցրած ենք մեր բարոյական ազդեցութիւնը մեր ժողովրդի վրայ, կամ որ կրօնն ու հաւատը դազարել են ներգործութիւն ունենալուց քրիստոնեաների վրայ այն աստիճան, մինչ ախտով ու ցաւով լցւած մէկը չէ վախենում Ասածուց եւ, սուրբ խորհրդի տակ մտնելով, գնում է ախտաւորելու փշաջնելու մի այլ անմեղ անձի: Եթէ այս այսպէս է — էլ ինչո՞ւ են պէտք կամ ի՞նչ արժէք ունին պսակի աղօթքներն ու օրհնութիւնները:

Եթեւորդ՝ Ամուսնութեան հիմքը ամուսնացողների փոխադարձ սէրն է եւ ազատ ընտրութիւնը: Եւ այս սէրն ու ընտրութիւնը հասունութեան արդիւնք պիտի լինին: Կրիստոնէական եկեղեցին անչափահասներին չէ տալի իրաւունք ամուսնութեան: Հետեւաբար՝ « որք ի սրտէ եւ ի պարտուց կոչեցեալք են ի ծառայել հասարակութեան, բժիշկք եւ հրապարակախօսք» (իսկ հոգեւորականք՝ ո՞չ,) պարտաւոր են նպաստել թէ քրիստոնէի եւ թէ առ հասարակ ամենքի ակնասխիակ զարգացման, հասունութեան աստիճանը բարձրացնելու, այլ ոչ թէ զանազան պատգոսների ու պատկանների խարուսիկ ու մուգնող պայմանների տակ երազական բարօրութիւններ տալ որոնելու: Այսօր ոչ քաղաքակրթւած եւրոպան, ոչ Անգլիան, ոչ Ամերիկան ամուսնացողները այդպիսի վկայական պահանջելու օրէնք եւ կարգադրութիւն չունին, եւ այդ՝ ոչ թէ այն պատճառով, որ այդպիսի խնդիրներ չեն յարուցւած, այլ որ այդպիսի ձեւական պատկաններն ու վկայականները վաղուց արդէն անմիտ եւ աննպատակայարմար են ճանաչւած: Եւ զարմանալի չէ՞, որ հենց այն ժամին, երբ Ռուսիայի մէջ պատգոսներ վերացնելու խնդրի բարձունքն այնքան սրտի բերկրութեամբ սպասում են ողջունելու առաջադիմականներն ու ազատամիտները, մերձիք, մեր առաջադիմական ու ազատամիտ կարծածները գուցէ աւելի մեծ բերկրանքով ողջունում են ամուսնական կապի մէջ Արիստակէս սրբազանի կողմից առաջարկւած մի նոր պատկան, — մի նոր պատգոս-վկայական — մի նոր ձեւականութիւն աւելացնելը: Չեւականութիւն՝ որ այնքան նսեմացնում է ազատ սիրոյ եւ ազատ ընտրութեան վսեմ պատկերը, մի քանի բացառական երեւոյթների պատճառով: Եթէ այսպիսի վկայականները կը վերացնեն հիւանդութիւնները, ինչո՞ւ այն ժամանակ չպահանջել ամուսնացողներից ներկայացնել նախապէս եւ բարեբարոյութեան վկայական ուսիրխանութիւնից: Ո՞ւմ յայտնի չէ, որ ընտանիքների աւերելու, ամուսնալուծական խնդիրների եւ ամեն չարիքների բուն պատճառը անբարոյականութիւնն է: Եւ ո՞վ պիտի տայ այդ վկայականը, եթէ ոչ ոստիկանութիւնը... քանի որ հոգեւորականութիւնը

դազարել է ժողովրդի վրայ բարոյական ազդեցութիւն ունենալուց, քանի որ հաւատը չքացել է եւ քանի որ ամուսնացողները ընտրութիւն անելու համար ահաս ու անբարեմիտ են հռչակւում եւ վերջապէս քանի որ վկայականներն են փրկարար միջոց ճանաչւում, վկայականները, որ շատ շատ՝ մի որոշեալ ժամի համար են վկայւած: Իսկ բուն բարոյականը, որ մարդու է՛ն հաստատուն դանձն է, մոտացութեան է արւած . . .

Կրիստոնէութեան-կրօնի ամբողջ հոգածութեան առարկան, նպատակակէտը մարդու հոգեկան բարոյական աշխարհի մաքրումն ու աղեւացումն է: Երբ մէկը ախտաւոր, հիւանդ է եւ առանց խղճահարութեան քայլ է անում անբաղաւայնելու մի ուրիշին հետն ամուսնանալով կամ նոյն իսկ վարակիչ յարաբերութիւն հաստատելով, ասել է, որ նա անբարոյական, փշաղած անձն է: Ոչ մի վկայական այդպիսի անձանց չէ կարող ազատ պահել իրենց ախտեցողից ազդեցութիւնից: Սյգպիսիների ամուսնութիւնները չօրինաւորացնելով կամ չօրհնելով, մենք՝ հոգեւորականներս բնա՛ւ բնա՛ւ չէնք արգելում նրանց՝ այդ վարակածներին չվարակելու ուրիշներին: Եթէ եկեղեցու նպատակն է, վկայական պահանջելով, վարակման առաջնատնել, ընտանիքներ փրկել, չէ հասնում եւ չէ կարող զբանով հասնել իր նպատակին, քանի որ վարակածը, ինքն իր մեջ չունենալով իրեն զսպելու ասեճը, ունի ամեն միջոց վարակելու շատ շատերին եւ նոյն իսկ վատասելու սերունդ թողնելու ազատ կենակցութեան, ազատ կամ դադանի յարաբերութեան, կեղծ վկայութեան եւ նոյն իսկ կրօնափոխութեան միջոցներով: Իսկ եթէ եկեղեցին, վկայական պահանջելով, միայն մտածում է ամուսնալուծական խնդիրները պակասեցնել իր աստեաների միջից, թողնելով այն վարակածներին իրենց բազդին կեանքի մէջ, դա մի ասակ ձեռքերը հրապարակով եւ թմբուկներով լսանալու սիրատոտական արարողութիւն է — աւելին եթէ չէ:

Ողջունելի՛ եւ սրտանց ողջունելի՛ է մեր մամուլի մէջ այդ խնդրի յարուցումը, որ կը ծառայէ հասարակութեան աչք բանալուն, այլ բնաւ ողջունելի չէ ըլչկական վկայական, այն էլ միայն այբերկից, պահանջելու կարգադրութիւնը:

Խօսեցէ՛ք, գրեցէ՛ք, քարոզեցէ՛ք, կարգացէ՛ք ժողովրդին այն ամէն բանի համար, ինչ որ պէ՛տք է, ինչ որ անհրաժե՛շտ է նրա բարոյական եւ բնկերաւորական բարեկեցութեան համար: Հրատարակեցէ՛ք գրքոյկներ ու տարածեցէ՛ք ժողովրդի մէջ, հրահանգեցէ՛ք քարոզներ տալու այդ նիւթի մասին, կազմեցէ՛ք ինքներդ լաւ քարոզներ ու ցրեցէ՛ք բոլոր եկեղեցիների մէջ, պատիրելով որ քարոզելու շնորհ չունեցող քահանաները կարգան այդ գրւած քարոզները: Բաց արէ՛ք ամուսնացողների աչքերը, եթէ փակ են, մտքերը՝ եթէ սպէտ են, գիտա-

կից արէք հիւանդ ամուսնութիւններէն առաջացող հետեւանքներին . կոչում արէք նրանց խղճին , նրանց սրտին . յորդորեցէ՛ք , խրատեցէ՛ք , ուսուցէ՛ք , համոզեցէ՛ք , որ ամուսնութիւնից առաջ ինքնայորդոր կերպով դիմեն բժիշկներին . եթէ տկարութիւններ ունեն , նախապէս բժշկուեն , եթէ մոլութիւններ ունեն՝ ջանքեր , ձիգեր գործ դնեն զարծի գալու-ուղղելու եւն . եւն . : Այո՛ , արէք եւ անենք այն ամենը , ինչ որ կարո՛ղ է եւ պէ՛տք է ժողովրդի , ամուսնացած թէ չամուսնացած , առողջ մտածութիւնը , բարոյական պարտաճանաչութիւնը , կրօնական մաքրութիւնը , մտաւոր հասունութիւնը առաջ բերել , զարգացնել , բայց զգուշանանք այնպիսի արտաքին ձեւի , պահանջի , վկայականի ու պատենտի տակ դնելու , ծածկելու բուն էականը , որ միշտ կարելի կը լինի ոչ միայն արտաքուստ կատարել , թուղթը ներկայացնել , եւ այդ ամենով բնաւ նպատակի չհասնել , այլ եւ ընդհակառակը նորանոր կեղծագործութիւններ , աւելորդ ծախքերի , վէճերի ու գայթակղութիւնների դռների առաջ ժողովրդին կանգնացնել : Կրթատնէական կրօնն առանց այն էլ ժամանակի ընթացքում , չնորհիւ հոգեւորականներին՝ « Ասածուն լոկ շրթունքներով մեծարելու » ցուցամոլ յատկութեան՝ ստոյգել է իր շունչը , կորցրել է իր կենդանութիւնը ու խեղդել-կաշկանդել է այլեւայլ ձեւականութիւնների տակ . այսօր էլ ովսանանքերով է ողջունում ու ներս բերում մի նոր ձեւականութիւն , մի նոր վկայական , մի նոր պատենտ , որ միայն հոգեւորականներին խղճին քսուող պալատան կարող է նկատուել , այլ ոչ ժողովրդի ցաւերի սպեղանի , որ հոգեւորականներին դէպի առաւել ձեւական ժողովրդասիրութեան ու ցուցական պարտաճանաչութեան կը տանի , քան թէ ընտանիքների վրկարար զարման կը լինի :

Գաւի Ս . Էջմիածնի Սիւնոյի կարգադրութեանը :

Արիստակէս սրբազան խնդրում է բժշկական վկայականի պահանջը պարտաւորական անելու հաւանութիւնն իր թեմն համար : Սինոզը , եթէ մինչեւ անգամ գտնում էր այդ օգտաւէտ , պիտի թող տար Սրբազան Արիստակէսին իբրեւ ժառանգակաւոր փորձ գործ դնելու իր թեմում : Ապա խնդիրը , որոշ քննադատութեան , ուսում նասիրութեան եւ գործնականութեան բովերից անցնելուց յետոյ , եթէ կը հանդիսանար իրօք օգտաւէտ ու նպատակայարմար , նոր այն ժամանակ Սինոզը կը հոգար պատշաճաւոր ճանապարհով ընդհանրացնել տալու հայ եկեղեցումէջ :

Ասում ենք պատշաճաւոր անասպարհով : Հայ եկեղեցին ամենայն տեղ միեւնոյն կանոններով է առաջնորդում : Այս կանոնները դրւած ու հաստատուած են տիեզերական ու ազգային ժողովներով : Պատկի նկատմամբ՝ մինչեւ որոշեալ հասակը անչափահաս եւ մինչեւ որոշեալ աստիճանի ազգակցութիւնը չհաս է

ճանաչւած : ուստի եւ պատկի օրհնութիւն կատարող պաշտօնեան իրաւունք չունի նրանց պատկելու , ուր էլ որ լինի այդ՝ Ռուսաստան թէ Ճաճկաստան , Եգիպտոս թէ Պարսկաստան , Եւրոպա թէ Ամերիկա : Բացառութիւններ կարող են տեղի ունենալ միայն ու միայն ազգից ընտրւած եւ օժութեամբ ծայրագոյն իշխանութիւն ստացած Հայրապետի հաճութեամբ ու թոյլտուութեամբ :

Այսօր Ս . Էջմիածնի Սինոզը նոր կանոն է սահմանում ամուսնացողների նկատմամբ , որ պարտաւորական չէ կարող լինել Ռուսաստանից դուրս գտնուող հայ եկեղեցու համար : Սինոզը կարող է վաղն էլ մի այլ կանոն հաստատել միրուողների , պատարագի եւ այլ արարողութիւնների վերաբերութեամբ : Ո՛ւր կը տանի այս կացութիւնը : Գաղաքականօրէն միմեանցից անջատուած մեր եկեղեցին , չի՞ անջատուի արդեօք եւ իր կանոններով , իր կարգերով :

Նոյն իսկ եւ այդ ամենից անկասկած Սինոզի ինքիւր է - արդեօք Սիւնոզը իրաւունք ունի՞ մեր եկեղեցուն եւ կաւոն սարու . արդեօք Սիւնոզը բացարձակ օրհնատ իշխանօրի՞ւն է մեր եկեղեցու նկատմամբ : Ի՞նչպէս է որ դպրոցական ու կալուածական խնդիրներում Ս . Էջմիածնի Սինոզը կուչ է գալի եւ պատասպարանք է որոնում ամենայն Հայոց Հայրապետի ծայրագոյն իրաւանց եւ հովանեաց ներքոյ , իսկ կրօնական այնպիսի խնդրում , ինչպիսին է եկեղեցու եօթն խորհուրդներից մինը՝ ամուսնութիւնը - Սինոզը հանդէս է գալի իբրեւ բացարձակ օրէնրատու իշխանութիւն : Բացարձակ ենք ասում , որովհետեւ Սինոզն իր վերջին կարգադրութեան իբրեւ հիմք չէ առաջ բերել ոչ տիեզերական եւ ոչ ազգային ժողովների կանոններ , ոչ հայրապետական կոնգրակներ եւ ոչ այլ ինչ եկեղեցական : Սինոզը , եթէ իր վերջին որոշմունքը գտնում էր շատ օգտակար եւ անհրաժեշտ , պիտի ներկայացնէր Ամենայն Հայոց Հայրապետի անօրէնութեանը : Նորին Օժութիւնը , եթէ ազգային ժողով գումարելը ծանր կը զբտնէր , իր կոնգրակներով կը հարցնէր պատրիարքների , թեմակալ առաջնորդների , սրանց միջոցով քահանաների ու ծխականների կարծիքները եւ ապա մեծամասնութեան որոշմունքը իր հայրապետական հրամանով կը տար տարածել իբրեւ ընդհանրական կանոն հայ եկեղեցու մէջ եւ մի եւ նոյնը կը տար Սինոզին ի հրահանգութիւն : Մեր եկեղեցու օրէնսդրական ճանապարհը այս է , երբ կարելի չէ ընդհանուր ժողովը :

Սինոզը զուտ հոգեւոր խնդիրների մէջ պարտաւորութիւն ունի հրահանգելու մեր եկեղեցու հայրապետների ցուցմունքներով , այլ ոչ թէ նոր կանոններ դնելու իրաւունք ունի . բայց Սինոզը իր նոր որոշմունքը չէ հիմնել կրօնական վկայութիւնների , սկզբունքների ու վարդապետութիւնների վրայ , այլ զուտ առողջապահականի : Այս դեպքում էլ Սիւնոզը գործել է իրաւագանցութեան պէտական օրհնադրութեան

սեռակէտից: Որովհետեւ Սինօզը, իբրեւ հոգեւոր հիմնարկութիւն, իբրաւունք չունի առողջապահական բժշկական սահմանները մտնելու եւ կարգադրութիւններ անելու, կանոններ տալու: Եւ վերջապէս ո՞ր իբրաւամբ կարող է Սինօզը բժիշկներին պարտաւորացնել վկայականներ տալու: Յայտնի է, որ օրէնքի մէջ նախատեսուած են բոլոր այն պարագաները, որոնց մասին բժիշկները պարտաւոր են վկայականներ տալու: Այդ պարագաների թւում չկան ամուսնացողներին՝ հոգեւոր իշխանութեանը ներկայացնելու համար՝ առողջութեան վկայականներ տալու պարտաւորութիւնները: Երեւակայեցէք, որ չքանի բժիշկները (հայ թէ օտարազգի) իրենց պարտաւոր չեն համարում այդպիսի վկայականներ տալը եւ ծխատէր քահանաներն էլ իրենց իբրաւունք չեն համարում առանց այդպիսի վկայականի պակ օրհնելը. — ի՞նչ անի պակեւորը: Եթէ մեր եկեղեցու մէջ կան նոյն իսկ կրօնական սահմանումներ, որոնց էականն ու ներքինը առողջապահական է, դրանք վարդապետւած ու կողուղւած են հոգեւոր իմաստների վրայ ու կրօնական վարագոյրների տակ, այլ ոչ այնպէս զուտ ու բացարձակ աշխարհիկ են, ինչպէս Սինօզի վերջին կարգադրութիւնը: Թերեւս դիտմամբ կապած են ամուսնալուծական խնդրի հետ, որ իրենց իբրաւունք համարեն վկայականի կամ այլ պահանջ սահմանելը. սակայն այդ չէ կարող կապելը. քանի որ, ինչպէս վերը յիշատակեցինք, վերերական հիւանդութիւնը իբրեւ հիւանդութիւն չէ, որ դառնում է պատճառ ամուսնալուծութեան, այլ իբրեւ ապացոյց ամուսնական անհաւատարմութեան:

Ուստի եւ մարգարէ չպէտք է լինել գուշակելու համար, որ այդ նոր օրէնքը, ամուսնացողներից բժշկական վկայական պահանջելու կանոնը կը մնայ անգործադրելի եւ ինքնին՝ կը հանդիսանայ միայն վկայական մեր սինօզականաց բարի ցանկութիւնների ու ժողովրդանէր ձգաւմների:

Մ. ա.-ք. ՄԵԼԵԱՆ

24 Յունի. 1905 թ. Պարիզ  
Յ. Գ. Այս յօդուածը « Անահիտ » ի համար էի պատրաստել եւ յղել էի արդէն խմբագրութեան, երբ պատահմամբ ձեռքս ընկաւ « Բիւզանդիոն » թերթի համարները, ուր նոյն խնդրի մասին կային գովեստներ ու գիտողութիւններ: Ուստի ի նկատի ունենալով որ « Անահիտ » զրկւած է թուրքի մասնելու գիւրութիւններից, կարեւոր համարեցի յօդուածիս պատճէնն ուղարկելու « Բիւզանդիոն » ի խմբագրութեան, եթէ յարմար կը գտնի, հրատարակելու եւ իր էջերի մէջ: « Բիւզանդիոն » տպել էր այն N 2544 համարում եւ յաջորդ թւին մէջ նւերել էր իր կողմից առանձին « Սորհրդածութիւններ », համարելով իմ գրածը՝ « կրկին ու կրկին կարգացուելու արժանի նշանաւոր յօդուած »:

Նոյն

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ  
Յարմանի Ասմանի<sup>(\*)</sup>

Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ե Յ  
Ֆրեսերի Բ Ա Բ Է Բ

Կարդայ(1) գրուղբ(2) աղջիակ(3) Ֆուրսակ եւ գրե պատասխանի դասեր քաղաւորին այսպիս.

Անտես կամիս ինձիկ կունահ ցուցանել,  
Որ չեմ տեսեր աչօքս ոչ սրաէս խորհել,  
Ոչ ի քուն երազիս ինձիկ գուշակել,  
Եւ ոչ բանիդ գիտակ եւ ոչ հետեւել:

Ձը կայ ինձիկ մեղք դու ինձի մեղադրել,  
Կամիմ կամօքս, սիրտս է(4) ինձ ցանկացել,  
Աչերս ի քո սրաէդ է ինձ նայեցել,  
Ձիմ տեսն առանց ինձիկ յիսնէ գողացել:

Իրտեմ որ դու այլ գեղեցիկ ես աղվոր,  
Ինդով եւ պատկերով շորհօք փառաւոր,  
Ձերթ աննըման ճոհար ակըն լուսաւոր  
Որ չի կայ այլ երկիր քո պէս հանց աղվոր:

Գոված ես հանց երկրի որ ես լըսեցի,  
Թէ չէ դու ես յինէն անտես 'ւ անյայտնի,  
Ես այլ շատ ցանկացայ սըրտովն յօժարի,  
Ոնց որ դու դիս տեսար ես ըղբեղ տեսի:

Ամ թէ մարդ գըտանէ հընար եւ կամ ճար  
Որ քո սէրդ իմ սըրտիս լինենար սաղկար,  
Նա իմ սըրտիս է կամ եւ հոգուս յօժար,  
Որ զիմ սեսս ի քեզիկ զքոյդ ինձ կամեցար:

Բայց ես ի յերկիւղէ մեծ թագաւորին  
Ձի կամիմ որ իմ սըրտիս կամքըն կատարին,  
Ապա թէ որ ուզես զճածուկըն սըրտին,  
Կամիս զարիւնս հեղուլ տալ թագաւորին:

(\*) Տես Անահիտ, 1904 թիւ 11: Պ. Յ. Մաքլեր որոշած ըլլալով առանձին հատորով ի լոյս ընծայել « Ֆարմանի Ասմանի » Ֆրանսերէն թարգմանութիւնը, մենք պիտի հրատարակենք միայն հայերէն բնագիրը:

(1) Ձեռ. մէջ՝ կարդա (2) Ձեռ. մէջ՝ գրուիթն;  
(3) Ձեռ. մէջ՝ աղջկանն;  
(4) Ձեռ. մէջ՝ սիրս է յէ ինձ.

Հազար ամանաթ տամ զեմ ես զարիպ եմ,  
 Եւ օտար աշխարհէ հեռաստանէ եմ,  
 Շատ հարաթ մանկութեան սրբտով սիրել եմ,  
 Մի՛ ինձ պատճառ լինար, զեռ կատարեալ չեմ:

Թէ դու սիրով սրտիս ի յիս ի տես գաս,  
 Նա զիս յիմ արեւուս շուտով հանել տաս,  
 Այդ քեզ մեծ վրնաս է եւ մեղք եւ կուճահ,  
 Որ ըզք սրբտին կամքն մէն կատարել տաս:

Հանց մէկ պահու կենացդ որ ուսես շարար,  
 Նայ շատ տարին ըզխահրըն մի՛ մոռանար,  
 Ըզք սիրտըդ շահիս զիմն առնես ազար,  
 Այլոց վաս կամենաս քո սիրուդ համար:

Թէ բանս որ ես կ'ասեմ սրբտիդ յօժար է,  
 Եւ չես ի հաւանել թէ այդ մուհալ է,  
 Գիտեմ որ չես գիտուն խելքըդ կընկան է,  
 Ի մըճլըսին սիրուն հարբած եւ խեւ է:

Թէ սէր կայ քեզ արե՛կ մօտ ի յիս,  
 Թէ չէ հա գալ առ քեզ չէ յօժար սրբտիս.  
 Թէպէտ ի գաս առ իս եւ կու սիրես զիս,  
 Հանցեղ արեկ մօտ յիս չիմանայ մարդ աստըն-  
 վորիս:

Փարման մտնուելըս այս ճուղապ գրրեցի,  
 Շահիշատիտութիւնիդ բացխուն խրրկեցի,  
 Կո գալըդ յիս ի մօտ խնդումն է սրբաի,  
 Բայց շատ ահ կայ ինձիկ, վասն այն կու վախի:

(Շարունակելի)



ՏԻԿԻՆ ՍԻՐԱՆՈՑԵՒ ՅՈՒՔԵԼԵԱՆԸ

Թիֆլիսի Հայոց Գրամատիքական Ընկերութիւնը որոշած է Ապրիլ 5ին Թիֆլիսի մէջ տօնել Տիկին Սիրանոյշի բեմական երեսնամեայ գործունէութեան յարելանը: Անտարակոյս ենք որ բոլոր Հայերը որ գեղարուեստը կը սիրեն և գիտեն Թէ ի՞նչ մանկագին ծառայութիւններ մատուցած է Տիկին Սիրանոյշ հայկական բեմին, պիտի փութան այս առթիւ յայտնել մեր աղանդաւ որ արուեստագիտունեայն իրենց յարգանքն ու երախտագիտութիւնը: Շնորհաւորական ուղերթ, հետագիւր կամ նուէր պէտք է է ուղարկել Գրամատիքական Ընկերութեան նախագահին, Princesse M. Toumanian, Rue Bariatinsky, N. 8, Tiflis:

Մեր յառաջիկայ Թիւով պիտի հրատարակենք Տիկին Սիրանոյշի բեմական գործունէութեան մասին յօդուած մը զոր վերջին պահուն ստացանք Բագուէն:

ՔԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻՆ

ԵՒ

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Ե.

Հոռոմէական-պապական եկեղեցին ամէն զիւրութիւն ունէր կազմակերպուելու այնպէս, ինչպէս պահանջում էր աւետարանական հոգին: Ոչ ոք էր խանգարողը: Չկար ո՛չ կողքին եւ ո՛չ գլխին աշխարհիկ իշխանութիւն: Սա ինքն էր մի ժամանակ ամբողջ Եւրոպային հրամայողը, իշխաններին թագեր բաժանողը, թագակիրներին գահընկեց անողը եւ ռաբորթիկ՝ վանքերի ղռներին կանգնեցնողը:

Եւ պայն իր այս միահեծան եւ անկոպար իշխանութիւնը պսակեց Աստուծոյ փոխանորդութեան եւ անսխալակաւորութեան աստիճանով ու արագտով: Մի պաշտօն եւ յատկութիւն, որ ոչ մահկանացու ծնուածը քաջուեց իրեն վերագրելու եւ ոչ՝ « ազատութեան, հաւասարութեան ու եղբայրութեան » պաշտօնէութիւնը՝ ամաչեց դաւանել եւ ընդունելու: Պապը հանդիսացաւ մի նոր նարուզողոճոսոր, պաշտուած ու երկրպագուած իր արծակած հրամանների ու պատուէրների մէջ: Եւ քանի՛ տասնեակ հազար Սեղաքներ, Միսաքներ ու Աբեղնագոյներ այրուեցին, խորովուեցին խարոյկների ու բոցերի մէջ, մաշուեցին ու փճացան բանտերի մէջ, դաւարուեցին ու անչնչացան տանջանքների ու զօտիւային մեղանանքների տակ . . .

Պապական-քաթոլիկ եկեղեցու հոգին՝ երկնային ու երկրային կաւթերի մի տեսակ մարմնաւորումն է, հիմնուած երկու առաքեալների՝ Յիսուսին երիցս ուրացող, Յիսուսին սիրելու մէջ երիցս կասկածելի Պետրոսի եւ Յիսուսի վարդապետութեանը՝ «ամենայնի հեա ամենայն» լինելու գիւրաթեքութիւնը ուող Պօղոսի մարմնեղեն քաղութիւնների վրայ:

Պետրոս ունէր իր ձեռքին երկնային արքայութեան բանալին, պապը զրանով չբաւականացած՝ առաւ իր ձեռքը եւ մարդկանց արտերի բանալին՝ այս աշխարհի մէջ:

Պետրոս ունէր ստատանուող սխալական բնութիւն, պապը հանդիսացաւ ու մնաց անսխալական:

Պետրոս մարդկանց առաջ ուրացաւ իր Տիրոջը եւ դաւնագին զղջաց. պապը մարդկանց առաջ դաւանեց Տիրոջը, իսկ գործով ու հոգով ընդ միշտ ուրացաւ ու զղջալու մասին բնաւ չմտածեց:

Պօղոս նեղ պարագաներում Աստուծոյ օգ-

նութիւնը մոռացած՝ կայսեր զիմելու, կայսեր բողոքելու սպառնալիքին էր զիմում. պապն աստուածային ու կայսերական իրաւունքներն իր մէջ առաւ, որ մարդիկ նեղ պարագաներում, բացի իրենից, ոչ ոքի զիմել ու բողոքել չկարողանան:

Պօղոս՝ « Հրէայի հետ հրէայ, հեթանոսի հետ հեթանոս եւ ամենայնի հետ ամենայն » եղաւ. պապը, « ամենայնութիւնն » իր մէջ ամփոփելով, աւետարանը « ամենայնն » ի՛ր համար « ամենայն » դարձնելու ծառայեցրեց:

Պօղոս, զարմացած՝ որ քրիստոնէայ եղբայրութեան մէջ իր հոգին առաջ բերեց Պօղոսեան եւ Ապօղոսեան հերձուած, ամեն կերպ աշխատեց « մի Բրիստոսի », « ի Բրիստոս եղբայրութեան » անունով նրանց հաշտեցնել. իսկ պապը կրակով ու սրով, բանադրանքով ու սպանալիքներով՝ « արաքոյ հովմէական եկեղեցւոյ չիք փրկութիւն » ճանաչել ու դաւանել պահանջեց:

Ը.

Պապը, բարձրանալով գահապետութեան ու հոգեպետութեան անսխալական եւ աստուածածե աստիճանը, բնականարար պիտի մտածէր իրեն շրջապատելու այդ բարձրութեան համապատասխանող շքով ու փայլով, զարդով ու փառքով: Եւ, իրօք, ինչ որ մարդկային միտքը կարող էր այդ նպատակի համար յօրինել ու ստեղծել — բոլորը, բոլորը լի ու լի ունեցաւ պապը: Արծաթն ու ոսկին, մարմարն ու պորփիւրը, ներկն ու վրձինը, արհեստն ու արուեստը կլասիք հանձարների ստեղծագործութեանց միջոցով՝ հանդէս եկան պապերի աշխարհային փառքը լուսապայծառելու եւ մեծութիւնը շողովառելու:

Ունեցաւ այդ ամենը պապը եւ իմացաւ այդ ամենից մասն ու բաժին հանել ու յատկացնել իր նուիրապետութեան մէջ գոյութիւն ունեցող անթիւ, անհամար աստիճանակարգութիւններին ու պաշտօնեաներին ամենախիստ կարգաւորութեամբ ու ճշտութեամբ:

Պապականութիւնը, չբաւականացած այդ արտաքինով, ամեն հնարաւոր միջոց մտածելով եւ փորձելով ու գործադրելով, ձգտեց քսթիլիկութիւնը մի որոշ կաղապարի վերածել եւ այդ կաղապարի մէջ իր եկեղեցուն, իր դաւանութեան հետեւողներին հոգին ու միտքը, սիրան ու զգացումներն ամուր ամուր ձուլել ու կերպաւորել:

Աշխարհի ստեղծագործութեան օրից մինչեւ այսօր, թերեւս, ոչ մի վարդապետութեան հետեւողներ իրենց վարդապետութեան հիմնադրի հոգուն, քարոզներին ու գործերին այն աստիճան տրամադծօրէն ներհակ շահեր, ճամբաներ, գաղափարներ, միջոցներ ու քայլեր չեն ունեցել, չեն գործադրել: Ինչպէս պապականութիւնը իր անյագ փառասիրութեամբ, իր արիւնոտ պրօպագանդայով, իր՝ մարմնից մինչեւ

խղճի ներսերի տիրապետութեամբ, իր՝ իբրեւ մուրուած՝ սրբւոց մարմններն այրելու եւ հոգիները փրկելու ճենձերոզ խաբոյկներով, իր ձեռքի տակ դէպ ի դէպ կուտակած անթիւ հարուտութիւններով, իր գործ արկած դժոխային միջոցներով ու « ամենայն ամենայնով »:

Յիսուս հէզ էր եւ խոնարհ. պապը վէս է եւ գոռոզ:

Յիսուս պարզ էր ու ընկեր խեղճերի, կաղերի, կոյրերի, մաքաւորների. պապը մի հագին բարձրութիւն է ու հրամայող նոյն իսկ իշխանների ու պետերի:

Յիսուս դատելու չեկաւ աշխարհը, պապը հաւատաքննական դատերով ահաբեկեց աշխարհը:

Յիսուս սիրով ու զթով էր բժշկում ու դարձի բերում, պապը խարոյկների մէջ կենդանի կենդանի էր այրում, բանտերի ու շղթաների մէջ հիւժում ու մաշում:

Յիսուս գլուխը գնելու տեղ չունէր, պապն անհուն հարստութիւնների վրայ է հանդչում:

Յիսուս դեռնի վրայ բոկոսն էր քայլում. պապը ոսկեայ դեպակներն մէջ բազմած՝ մարդկանց ուսերի վրայով է ընթանում:

Յիսուս « մարդու որդի » էր եւ իր « Հօրեց լսածներն, Հօր կամքն ու պատուիրաններն » էր տալի աշխարհին. պապը Աստուծոյ փոխանորդ, դեր-սուսուած է եւ իր անսխալական հրահանգութիւններն ու հրամաններն է տալի աշխարհին:

Յիսուս Մարիամներին ու Մագթաղենացիներին, մուրուածներին ու պոռնիկներին չմեղանչելու ու վերականգնելու ճանապարհի վրայ էր հանում. պապականութիւնը Մարիամեան եւ Մագթաղենեան պոռնիկանոցներ էր պահում ու կանացի մարմինը շահագործում:

Յիսուս սուրբ պատեանի մէջ գնել էր հրամայում. պապը խաչակրութեան անունով պատերազմ, սուր, աւեր ու մահ էր պատուիրում:

Յիսուս բաշխում էր հացը կարօռեալներին, սովածներին անխտիր. պապը՝ հացը հոգին գնելու, մարմինը որդեգրելու գնով է առաջարկում արիւնքամ եղած, կրակի ու սրի մատուցում, մահմեղական խժոժանքից կիսակենդան դարձած՝ այլադաւան քրիստոնեաներին:

Յիսուս բարոյական կենաց զովարար ու փրկարար ջուր էր ջամբում մահկանացու կրքերով այրող սրտերին. պապական հոգեւորականները օչարակների ու լիկեոսների, մոնաստորումների, բնեհափկոյնների ու շարքեօզների աղբիւրներ կն հոսեցնում մարդկանց մահկանացու կրքերը առաւել բորբոքելու եւ իրենց գրպանները միայն ու միայն հարստացնելու համար:

Յիսուս հրապարակով « վա՛յեր » էր կարգում կեղեքիչներին, հարստահարիչներին. պապը՝ կեղեքումների ու հարստահարումների դիակները կոխտակելով, պարզում է իր բարեացակամ ձեռքերը կեղեքիչների ու հարստահարիչների:

րիչները արեւոտ պետին՝ կարմիր Սուլթանին . . .

Յիսուս ժողովրդի համար ապրեց, գործեց ու խաչուեց. պապը ժողովրդին իր համար է ապրել, գործել ու խաչել տալի :

Յիսուս . . . եւ պապը . . .

Թ.

Ահա մի քրիստոնեայ եկեղեցի, որի վրայ ոչ մի աշխարհիկ իշխանութիւն չէր ծանրանում, չէր հրահանգութիւններ ու հրամաններ թելադրում, ընթացաւ միանգամայն ներշնչելով ընթացքով, ձգտեց տալու ներշնչել արդիւնք, դարձաւ ազատութիւն ու հաւասարութիւն թշնամանող ու խեղճող, ձուլեց-կազմեց մի գրանիտեայ միանեմանութիւն, հանդիսացաւ տէր մահկանացուների խղճի, մտքի ու նոյն իսկ մարմնի այս աշխարհում եւ հողաբարձու ու կարգադրիչ հոգիներէ՝ հանդերձեալ աշխարհում :

Մարդկային ազատ մտածութիւնը երբեմն երբեմն հանդէս էր դալի, ձայներ ու բողոքներ էր արձակում այդ բիրտ կապանքների ու կացութեան դէմ, բայց ամեն ձայն արձակող ու բողոքող խեղճութեամ էին բանտերի խաւարում կամ այրվում էին խարոյկների մէջ : Սակայն արձակուած ձայներն ու բողոքները արձագանք էին գտնում զարթնող ու հետախոյզ մտքերի մէջ :

Եւ խուլ տոգոհութիւնը անկող, բողոքող հոգին զօրանալով, պոռթկաց նորոգողութեան շրջանում : Բողոքականութիւնը կռիւ հրատարակեց պապականութեան դէմ :

Այս պայքարը պսակուեց նրանով, որ պապի գլուխը կտրուեց նոր կազմուած ու բարեփոխուած եկեղեցիների վրայից : Սրանով պապի գերիշխանութեան սահմանները սղմուեցին, բայց պապականութեան հոգին մնաց նոյնը, ինչ որ էր :

Նոր եկեղեցական կազմութիւնները (բողոքական, լուսերական, եպիսկոպոսական, կալվինական եւն. եւն.), այո՛, ողորուեցին ժամանակակից քաղաքակրթութեան լուսով, ջանք ու ձիգ գործ գրին աւետարանը մաքրելու մտտիապաշտութեան, մոլար վարդապետութիւն-

ների ու մեկնութիւնների ազտերից ու փոշիներից, ազատելու նրա կենդանի հոգին կաշկանդող ու զնդանող ծէսերից ու արարողութիւններից, զնելու նրա՝ աւետարանի պաշտօնականներին ժողովրդի հետ մօտ լինելու եւ ժողովրդի հետ կենդանի լեզուով խօսելու պայմանների մէջ, բայց եւ այնպէս որոշեալ ատիճանների վրայ դարձեալ մնացին կանգնած-չըջափակուած :

Եւ որովհետեւ նորոգողութեան շրջանում յարուցուած կրօնային պայքարների մէջ ժամանակի քաղաքական նպատակներն ու ձգտումները, զինուորական ու դրամական ուժերը եւ օժանդակութիւնները ունէին իրենց խոշոր բաժինները եւ բռնած էին այս կամ այն կողմը, ուստի եւ ունեցան իրենց մեծ ազդեցութիւնը :

Նոր, բողոքող կուսակցութիւնը, որ անհրաժեշտօրէն կարօտում էր աշխարհիկ իշխանութեան պաշտպանութեանն ու հովանաւորութեանը թէ՛ իր բողոքը շարունակելու եւ իր նոր կազմակերպուելու շրջանում ու թէ՛ այնուհետեւ մնաց ու մնաց ժամանակի քաղաքական իշխանութիւնների իրաւունքների տակ : Հետեւապէս եւ եղաւ յարմարող տիրող կարգ ու կանոններին, յարմարող կառավարական պահանջներին ու ձգտումներին : Յիսուս չէ, որ այնտեղ, այն նոր կազմակերպուած եկեղեցիներում իշխում է : Աւետարանը չէ, որ այնտեղ առաջնորդում է, այլ թէ՛ Յիսուս եւ թէ՛ Աւետարանը ընթանում են տիրող քաղաքական իշխանութիւնների կողմից իրենց ցոյց տրուած ու գծուած սահմաններում ու շրջաններում : Յիսուսի եւ Աւետարանի՝ իշխանութիւն, հարստութիւն եւ աստիճանաւորութիւն չճանաչող հոգին խոնարհուած է իշխանութեան, հարստութեան եւ աստիճանաւորութեան ներքոյ :

Ուստի եւ պարզ է, որ նոր կազմակերպուած եկեղեցիներն իրենց հոգեւորականութեան հետ միասին դարձեալ չեն Յիսուսի ցանկացածը ու քարոզածը, այլ կազմում են ու են մի տեսակ պաշտօնէութիւն ու առաքելութիւն երկրի քաղաքական ու ազգային իշխանութիւնների ճշգտումներին ծառայող ու հրահանգութիւններին համապատասխանող :

(Վերջը յարող թիւով)

ԽԱՆՈՒՆԻ

# Ի՞նչ ըրած են Ամերիկացիք Հայոց համար



Ամերիկացիք շատ քիչ տեղեկութիւն ունէին Հայոց մասին, մինչև այն թուականը երբ Ամերիկեան Ընկերութեան (Board) միտինարք՝ յայտնեցին զանոնք իրենց :

Առաջին միտինարք՝ 1819ին եկան ի Տաճկաստան, եւ իսկոյն մեծապէս շահաբերուեցան : Հայոցմով, որոնց հետ զիւրապէս մտան յարաբերութեան, եւ ընդհուպ հիացող եղան անոնց բարձր տաղանդին եւ ճարտարութեանը վրայ : Հետագօտութեան պոռոյտներ կատարեցին Տաճ-

կաց տէրութեան ներսերը՝ Տօթօր Կուտել . Տուայթ, Կրանթ եւ ուրիշներ, որոնց արդիւնքը՝ ուշադրութեամբ դրուեցաւ, լուսաւորելու համար Ամերիկեան քրիստոնեաները : Հայոց յատուկ պէտքերը՝ իբր ինքնուրոյն ցեղ եւ իբր հնաւանդ եկեղեցի, մասնաւոր խնամքով՝ ուսումնասիրուեցան, եւ ծրագիրներ պատրաստուեցան, առաջնակարգ Հայ եկեղեցականաց աջակցութեամբ, անմիջական պէտք եղած բարեփոխումները մտցնելու միջոցները ձեռք առնելու նպատակով :

Միսիոնարք ուղարկուած էին, ոչ թէ հայ ժողովուրդը քարոզելու համար, այլ որպէս զի անոնց օգնէին գործադրել տալու այն անմիջական բարեփոխումները՝ որ ազգին մտաւորական եւ բարոյական զարգացմանը համար պէտք էին : Ամերիկեան ընկերութիւնը ի Պոսթըն, իրենց հրահանգ տուաւ շանջատել Հայերը իրենց հնաւանդ եկեղեցիէն, այլ օգնել իրենց՝ կազմակերպելու գաղտնիք, եւ եկեղեցւոյն մէջ ստեղծելու զգացում մը եւ տեսչ մը կրթեալ եւ ուղղասէր եկեղեցականութիւն մը պատրաստելու եւ Աստուածաշունչը ժողովրդին խօսած լեզուովը տարածելու :

Կոստանդնուպոլսոյ ղեկավարիչ Հայերէն շատերը համամիտ եղան այս գաղափարներուն, եւ բացուեցան մեծ ազդեցութիւն եւ ոյժ ունեցող գաղտնիք, որոնք՝ մեծ մասամբ՝ նոյն իսկ Հայոց հսկողութեան ներքեւ էին : Տպագրական մամուլ մը հաստատուեցաւ ի Մալթա, որ քիչ յետոյ փոխադրուեցաւ Իզմիր, ուր տպուեցան ստուար թուով հայ գրքեր, որոնց մէջ եւ աշխարհիկ լեզուաւ Աստուածաշունչը, եւ շատ մը գաղտնիքներ եւ այլ գրեանք, մեծ պէսպիսութեամբ եւ թուով : Պոլսոյ Պատրիարքը տուաւ իր սրտագին հաճութիւնը՝ նոր եւ այժմէական գաստիարակական դրութեան : Այդ ժամանակին հռչակաւոր վարժարաններէն մին էր Փէյթիմալձեանիւնը, որ էր բանիբուն եւ նուրբ գիտնական հայ լեզուի եւ գրականութեան : Մինչեւ իր մահը՝ 1837ին, այս անձը անխոնջ եղաւ իր ջանքերուն մէջ մտաւորապէս եւ բարոյապէս բարձրացնելու իր հայրենակիցները : Իր աշակերտները՝ առաջնորդողներէն եղան բարենորոգմանց թէ՛ իր կենդանութեանը ժամանակ, թէ՛ իր մահէն յետոյ :

Միսիոնարք կ'ընդունուէին իբր ճշմարիտ բարեկամք ազգութեան, քանզի կը զգուշանային բաժանում մը յարուցանելու փափաքի նոյն իսկ երեւոյթ մը տալէ : Մէկ քառորդ դարէ աւելի ժամանակամիջոցին, այդ միացեալ ջանքերը յարատուեցին առաւել քան առաւել յաջողութեամբ եւ յուսալից արդիւնքներով : Հայոց ձեռնարկն եւ մատակարարութիւնը յառաջ բերաւ յաջողակ վարժարաններ իրենց զաւակացը, եւ Աստուածաշունչը՝ որ առ հասարակ փակեալ գիրք մ'էր՝ բաց ի լուսաւորեալ դասէն, հաճութեամբ կ'ընթերցուէր՝ վերածուած ըլլալով հանրային խօսուած լեզուին :

Բարեկարգութեանց ողին այնքան տարածուեցաւ, որ եկեղեցւոյ պաշտօնէից մէկ ըստուար մասն սկսան վրդովիլ, վախնալով որ չըլլայ թէ՛ ժողովուրդին ընդհանուր փափաքը կրթեալ եւ ուսեալ կղեր մ'ունենալու՝ կորդէ իրենցմէ ազդեցութիւննին եւ պաշտօննին :

1846ին, միսիոնարաց Օսմանեան Պետութեան մէջ մտնելէն 27 տարի ետք, Մատթէոս բարձրացաւ պատրիարքական աթոռն ի Կ. Պօլիս. ասի համակիր չէր բարենորոգիչ շարժման : Իր առաջնորդութեամբ ընդհանուր հալածանք մը սկսաւ, որու հետեւանքն եղաւ արտաքսումը լուսաւորչական եկեղեցիէն ստուարաթիւ անձերու, որ կը կոչուէին « Աւետարանականք » : Բանադրանքի հրամանագիրն հրամայուեցաւ կարգաւ ժողովրդին՝ Տաճկական տէրութեան մէջ գտնուող բոլոր եկեղեցիներուն մէջ, կըտրելով այսպէս ամէն յոյս՝ որով բանադրեալք կարենային այլ եւս ապաստան գտնել այն եկեղեցւոյն մէջ՝ ուր ծնած էին, եւ զոր կը սիրէին ինչպէս իրենց կեանքը :

Թուրքիոյ օրինաց համեմատ՝ ամէն ոք պէտք է արձանագրուած ըլլայ տէրութենէն ձանչըլւած կրօնական մարմնոյ մը տոմարին մէջ, առանց որու զուրկ է ո եւ է իրաւունքէ եւ առանձնաշնորհումէ՝ կառավարութեան կողմէ : Այս պատճառով անհրաժեշտ եղաւ նոր կրօնական մարմնոյ մը կազմութիւնը ի պէտս անոնց՝ որ արտաքսուեցան պատմական եւ մեծարոյ լուսաւորչական եկեղեցիէն : Առաջին բողոքական եկեղեցին հիմնուեցաւ Օսմանեան պետութեան մէջ 1846ին, բանադրանքէն յետոյ : Ի բացակայութեան անգղիական դեսպանին՝ Սըր

Սթրէտֆորտ Քէննինկի, միջնորդութեամբ Լորտ Քովլէյի՝ առաջին Բողոքական դաշնագիրն (charte) ստացուեցաւ Սուլթանէն 1847ին :

Երկարեցայ այս դէպքերուն վրայ որ յարաբերութիւն ունին ամերիկեան միսիսնարներուն Հայոց մէջ գործունէութեան նորագոյն պատմութեանը հետ , լուսաբանելու համար սախնդիրը, թէ ոչ միսիսնարական Բնկերութիւնը եւ ոչ միսիսնարք փափաքող էին բաժանելու լուսաւորչական եկեղեցին , կամ ո եւ է կերպով հարուածելու զայն կամ իր վարդապետութիւնը : Եւ այդ նախկին իրենց գրութեան միշտ յարած կը մնան մինչեւ ցարդ :

Երբ բաժանուածը 1846ին ստիպողական եղաւ, պայքարին առաջին տարբութիւնէն յետոյ , որ շուտով մեղմացաւ , երկու թեւերը սակաւ առ սակաւ սկսան մերձենալ , այնպէս որ՝ այսօր շատ քիչ կայ պատճառ բաժանման , եւ երկու ձեւերու յարաբերութիւնք են սիրայիլ եւ մտերմական : Այս վերջին քսան տարիներու մէջ՝ միսիսնարք թախանձագին պնդած են ամենէն աւելի լուսաւորեալ եւ յառաջացեալ մասին Հայոց, չբաժնուելու լուսաւորչական եկեղեցիէն , այլ մնալու հոն եւ օգնելու իրենց եղբայրակիցներուն որ հայ եկեղեցոյն մէջ մտցնեն այն բարենորոգումները , որ այդ եկեղեցոյն հանրածանօթ առաջնորդներէն իսկ կը նկատուին իբր անհրաժեշտ պէտք մը զայն զօրացնելու եւ բարձրացնելու համար :

Այս տողերը գրողը , երկար տարիներ Տաճկաստան բնակելէ յետոյ, եւ սերտ մտերմական յարաբերութեան մէջ գտնուելով բողոքական եւ լուսաւորչական Հայոց ինչպէս նաեւ միսիսնարաց հետ , կրնայ հաւաստի կերպիւ հաստատել՝ թէ այժմ չկայ գործնական կազմալուծիչ միտում, թէ՛ բողոքական մարմնոյ եւ թէ՛ միսիսնարներու կողմանէ , երբ Հայերը՝ ցեղովին եռանդուն կ'ըլլան իրենց զաւակաց կրթութեանը , կը կարգան Աստուածաշունչը իրենց հասկցած լեզուով եւ կը հաւատան ուսեալ եւ բարոյապէս բարձր եկեղեցականութեան մը պէտքին :

Ամերիկայի կատարած գործն աւելի բացայայտ ընելու համար. պիտի յիշատակեմ մէկ քանին այն յատկանշանական բաներէն որ կատարուեցան :

1. Ամբողջ Աստուածաշունչը տրուեցաւ ազդին՝ ժողովրդին խօսած լեզուով : Ասով պէտք է հասկնալ արդի հայերէնը, ինչպէս նաեւ հայթուրը լեզուն(1) : Ասի բողոքական Աստուածաշունչ մը չէ , այլ քրիստոնէական Աստուածաշունչն է , թարգմանուած հրեական եւ յունական լաւագոյն բնագրերէն : Ամերիկեան միսիսնարք եւ Հայ գրապէտք եղան թարգմանողքն , եւ Ամերիկեան Աւետարանական Բնկերութիւնը՝ տպագրողը : Առհասարակ ընդունուած է՝ թէ ինչ որ լուստերական Աւետարանը գործեց գերմանական լեզուին համար , եւ ինչ որ Քինկ ձէյմսի թարգմանութիւնը՝ անգղիերէն լեզուին համար , այս ժողովրդական հայ Աստուածաշունչն ալ ըրաւ Տաճկաստանի մէջ խօսուած հայ լեզուին ի մի ձուլմանը համար :

Ասոր ստուգութիւնը քանիցս ինձ հաստատած են առաջնակարգ հայ գրագէտներ, եւ ես իսկ ականատես եղայ անոր կրթիչ եւ միացուցիչ մեծ արդիւնքին առ հասարակ հայ գրականութեան վրայ՝ Աստուածաշունչի ձեւին տակ , յարգուած եւ սիրուած ամէն ճշմարիտ Հայերէ, եւ խիստ շատ կարգացուած ամէն ուր որ ուսեալ Հայեր կը դռնուին : Թարգմանութիւնը զոր կատարեց Տօթթօր Էլիաս Ռիկս , տարօրինապէս խնամեալ է եւ պարզ :

Ուրիշ գրքեր , ինչպէս վարժարաններու դասագրքեր , անգղիական գլուխ-գործոցներու թարգմանութիւններ , ինքնագիր երկեր , լրագիրներ եւ հանդէսներ , թէ՛ հայերէն եւ թէ՛ հայ-թրքերէն , ի լոյս ելան արագ յաջորդութեամբ , եւ ժողովուրդէն կը փնտռուէին թախանձանօք , եւ մեծապէս կը սպասուէին տուներու եւ վարժարաններու մէջ . սակայն ետքը սէրութեան յարուցած սեղմումները, ստիպեցին փակելու կարբուրդի տպագրական հաստատութիւնը , բայց չկարողացան սահմանափակել Պոլսոյ տպագրական լայնածաւալ գործը :

2. Կրթական ուսումնարանք հաստատուեցան ամբողջ Թուրքիոյ մէջ՝ Ամերիկացոց ձեռքով . ինչպէս արդէն տպացուցինք , միսիսնարաց առաջին գործերը կրթական էին : Ուր որ գնացին , յարուցին ժողովրդեան շահագրգռութիւնը դէպ ի պարոյնները : Հասարակ եւ գիւ-

(1) «Հայաստան քրիստոնէական լեզու» :

դային դպրոցներ, վերածուեցան շուտով բարձր ուսմանը վարժարաններու, եւ գիշերօթիկ դպրոցներ հաստատուեցան առ հասարակ երկրին բոլոր մեծ քաղաքներուն մէջ : Արեւելեան եւ Կեդրոնական Տաճկաստանի մէջ՝ ամբողջ աշակերտները, եւ Արեւմտեան Տաճկաստանի մէջ մեծամասնութիւնը կը կազմէին Հայերը, մեծ յառաջդիմութիւն տեսնուեցաւ հետեւեալ ամերիկեան դպրոցներու մէջ՝ որ հաստատուեցան մինչեւ ցարկ :

« Կեդրոնական Թուրքիոյ վարժարան՝ Այնթապի մէջ . Եփրատ Բոշիճ՝ Խարբուրդի մէջ (մանչերու եւ օրիորդաց) . Սք. Պօղոսի հասարակարան՝ Տարսուսի մէջ եւ Կեդրոնական Թուրքիոյ Վարժարան Օրիորդաց՝ Մարաշի մէջ : Այս դպրոցները, չնչին բացառութեամբ, կը յաճախուին միայն Հայոցմէ : Ասոնց վրայ աւելցնելու է Ամերիկեան Վարժարանն Օրիորդաց ի Կ. Պոլիս . Անարոչիս Բոշիճ (մանչերու) ի Մարտուս . Միջազգային Վարժարանը (մանչերու) Իզմիր . Բոսպոր Բոշիճ ի Պոլիս եւ Ասորի Բողոքական Վարժարանն ի Պէյրութ . ասոնց ամենը ունին բազմութիւ Հայ ուսանողներ, ուրիշ ազգէ ուսանողներու հետ միասին : Ուրեմն կան ինչ Ամերիկեան վարժարաններ ի Թուրքիա որ ամէն ժամանակ՝ ոչ նուազ քան 2000 մանչ ու աղջիկ աշակերտ ունին, եւ կը պարունակեն երկրին ամենէն լուսաւորեալ միաբերը : Պէյրութի վարժարանը ունի բժշկական բաժին մը, ուր շատ մը Հայեր կը ստանան բժշկական ուսում :

Այս բարձր ուսումնական հաստատութեանց մէջ, ուսուցչաց եւ վարժապետաց մեծագոյն մասը կը կազմեն Հայք, որոնց մէկ մասը՝ նոյն իսկ այդ դպրոցներու վկայագրեալներէն են, եւ որ յետոյ Ամերիկեան եւ Եւրոպական համալսարաններու մէջ՝ բարձրագոյն վկայականներ ընդունած են :

Այս վարժարանական հաստատութեանց հետ, իւր նախապատրաստական դպրոցներ՝ կան բազմութիւ թէ՛ հասարակ եւ թէ՛ բարձր գիշերօթիկ վարժարաններ՝ Էրզրում, Պիթիս, Վան, Սըվազ, Կեսարիա, Ատանա, Այնթապ, Իզմիր, եւ Ատափազար, ցրուած՝ երկրին ամէն կողմերը : Այս հասարակ դպրոցներու մեծ մասը՝ նոյն իսկ Հայոցմէ վերահսկուած են, թէպէտ անոնք ալ

ունին իրենց յատուկ շատ մը բարձր վարժարաններ՝ մեծ ազդեցութիւն եւ արժէք ունեցող :

3. Կանանց կրթութեան գործը՝ Ամերիկացիք մտցուցին այդ երկրին մէջ : Հայ կիներ՝ կ'ապրի հիմա, մինչ 40 տարի առաջ, ծանօթ էր իւր ամբողջ Խարբուրդ նահանգին մէջ մէջ միակ տեղացի կինը որ քիչ շատ կարգաւ գիտէր : Թրքաց բարքերն ու գաղափարները այնքան ներգործած էին Հայոց վրայ, որ ժողովուրդին մեծ մասը՝ կանանց դասը կը համարէր անկարող կրթութեան : Այս ամէնը փոխուած է արդ, եւ Ասորյ ցեղերէն այժմ ոչ մէկը աւելի հետամուտ չէ իր դստերը կրթութեան՝ քան այս պատմական ցեղը : Օրիորդք պատիւ բերին այս ժողովրդեան, իրենց արագ մտաւորական զարգացմամբ : Օրիորդաց վարժարանք այնքան ժողովրդական են այսօր Հայոց մէջ, որքան Ամերիկացւոց մէջ : Կանանց կրթութիւնը Ամերիկացւոց միջոցաւ մտաւ այս ժողովուրդին մէջ, եւ վստահ եմ թէ կան հազարաւոր առաջնակարգ Հայեր՝ որք բացէ ի բաց պիտի յայտարարեն թէ իրենց ցեղին եղած մեծագոյն պարգեւներէն մին է այդ : Ատի բարձրացուց իրենց ընտանեկան իմացողութիւնը, բերաւ ժշակում եւ նրբութիւն ընկերութեան մէջ, զոր անկարելի էր ուրիշ ու եւ է կերպով յառաջ բերել :

4. Ամերիկացիք մտցուցին նաեւ այժմեան բժշկականութիւնը : Պէյրութի բժշկական վարժարանն արդէն յիշեցինք : Ուրիշ բժշկական դպրոց մը Այնթապի մէջ՝ գործեց քանի մը տարի տեղւոյն վարժարանին հետ, բայց յետոյ՝ զրամբ պակասութեան պատճառով փակուեցաւ : Արդի մեթոտով հիւանդանոցներ հաստատուեցան Կեսարիա, Մարտուս, Այնթապ, Մերտին, Վան եւ այլ տեղեր, որոնց հետ հայ բժիշկներ յարաբերութեան մէջ են : Երկրին քաղաքական վիճակն արգելեց Հայոց համարձակ եւ ազատ կիրարկութիւն բժշկութեան : Եթէ բացարձակ ազատութիւն ըլլար հոն տեղացի բժիշկներու, այժմ շատ քիչ պէտք պիտի մնար ամերիկացի բժիշկներու ներկայութեան :

5. Ամերիկացիք եղան միջնորդ նպաստներու բաշխման՝ սովի եւ չքաւորութեան օրերու մէջ : Միսիոնարաց 181 թին երկիրը մտնելէն ի վեր, մինչեւ այսօր, Ամերիկեան միսիոնարք ձայն բարձրացուցին միշտ ի նպաստ տառապեալ ժո-

ղովուրդին, եւ իրենց ձայնը՝ երբեք անպատասխան չի մնաց, ոչ միայն Ամերիկայի այլ եւ Եւրոպայի մէջ: Այդ ցաւալի վիճակն յառաջ եկած էր հնտախտէ, մարախէ, երաշտէ, պատերազմէ եւ ջարդերէ: Այս Ամերիկեան միսիոնարք երբեք չըբեցին ժողովուրդը տազնապի եւ վտանգի ժամանակ, եւ շատ անգամ՝ անոր հետ քով քովի մեռան: Մնացին միշտ ժողովուրդին հետ՝ կեանքէ զատ իրենց ամէն ունեցածը կորսնցնելէ ետքը, մինչեւ որ փոխադրուեցան երկրէն իրենց գետապանին միջոցաւ:

Միմիայն 1896ին 1,200,000 տղարէ աւելի օգնութեան դրամ անցաւ միսիոնարաց եւ ամերիկացի կամաւորաց ձեռքէն, որ քաջարի Քլարա Պարթընի հետ, մտան երկրին խորերը եւ օգնեցին միսիոնարաց, հագուեցնելու մերկերը եւ կերակրելու սովեալները: Այս միջոցին որ կը գրեմ, Ամերիկացիք իրենց կարողութեան չափով կ'օգնեն թշուառ փախստականներու, որ կան Մուչի եւ Սասունի կողմերը:

Որքան կարող ենք գատել, եթէ այդ աղետից ժամանակ այս Ամերիկացիք չը գտնուէին երկրին մէջ, դրսի աշխարհը երբեք չպիտի գիտնար տազնապը. եւ եթէ գիտնար իսկ, չպիտի կարենար նմանօրինակ միջոցներով նպաստել:

Այսօր գուցէ քիչ կան իրազեկ Հայեր, որ տարակուսին թէ վերջին 40 տարուան մէջ մեծ բարեփոխումներ մտած են լուսաւորչական եկեղեցւոյն մէջ: Մի միայն աղօթելն այլ եւս չէ ճանչցուած իբր քրիստոնէութեան էութիւնը: Եկեղեցւոյ առաջնադասը գիտէ՝ թէ աղօթքի հետ, հարկ է եւ ուսում քրիստոնէական հաւատքի եւ կեանքի: Այս համոզումը մտաւ շատ եկեղեցիներու մէջ, եւ խելացի առաջնորդներու կրօնական հաւատքին մէջ կը բռնէ մեծ տեղ մը: Այս գաղափարն եկաւ Ամերիկայէ, եւ հայկական եկեղեցին արժանի պիտի ընէ միւս պատմական քրիստոնեայ եկեղեցիներու հետ քով քովի կենալու: Այս է հոգին՝ որ կ'առաջնորդէ դէպ ի ճշմարիտ բարեփոխում, եւ որ չէ կարող կորսուիլ՝ երբ հաւատարմութեամբ գործադրուի, վերահաստատելու եկեղեցին ամենասուրբ հաւատքին եւ պաշտամանը վրայ:

Չափազանցութիւն մը չէ ըսել թէ չկայ աշխարհիս վրայ ցեղ մը կամ ժողովուրդ մը, որու համար, իրենց թւոյն համեմատութեամբ, այն-

քան մեծ զոհողութիւն ըրած ըլլայ Ամերիկայի ժողովուրդը, եւ ցուցուցած այնքան համակրութիւն (որքան Հայերու): Ո եւ է ուրիշ երկրի մէջ՝ ասոր տարածութեամբ, ամէն աստիճանի այնքան ամերիկեան վարժարաններ եւ դպրոցներ չեն հաստատուած որքան այդ երկրին մէջ: Ո եւ է այլ ասիական ժողովուրդէ՝ այնքան մեծ թիւով երիտասարդներ եկած չեն մեր հողին վրայ, եւ ընդունած այնքան բարձր դիրքեր ուսման, վաճառականութեան եւ արհեստներու մէջ, որքան Հայերը: Ամերիկեան Միսիոնարաց Բնկերութիւնը ըրաւ եւ կ'ընէ տակաւին Հայոց համար, ինչ որ չէ ըրած ո եւ է ուրիշ ցեղի համար, առանց իսկ բացառելու Չինական մեծ ազգը եւ Ճափոնացիները:

Ամերիկացիք կը յուսան՝ թէ Հայերը պիտի ունենան ցեղային հպարտութիւն, առողջ դատողութիւն, համերաշխ իմացողութիւն եւ անձնանուէր պարտաճանաչութիւն, որպէս զի ինչ որ գործուեցաւ իրենց համար, պաշտպանէ զիրենք չարիքներէ եւ բարձրացնէ եւ փրկէ իրենց ազգը:

ՃԷՅՄՍ Լ. ՊԱՐԹՆ



ԲԱՌ ՍԵ Պ. ՉԵՐԱԶԻՆ

Իր թերթին յունուարի թիւին մէջ, Պ. Չերազ, պատասխանելով Անահիտի 1904 Նոյեմբերի թիւով հրատարակած « Մարդ մը » տիտղոսով յօդուածիս, կը գրէ հետեւեալը. « Եթէ « Հայկական Միութիւն »ը այդքան կարեւոր ընկերակցութիւն մըն էր, պէտք է փութալ զայն՝ վերահաստատել, « տխուր տիպարները » դուրս հանելով: Քանի որ Ֆրանսական դատարանը իրաւունք ստուաւ Միութեան այն երկու անգամներուն որ Պ. Վալթաքճեանի կողմէ ամբաստանուած էին, այդ միջադէպը փակուած է: Միութեան դիւանը . . . ուրիշ բան չունի այլ եւս ընելու բայց եթէ ժողովքի հրաւիրել անդամները, որոնք Փարիզ են տակաւին . . . »

եւ այդ Միութիւնը, նոր տարրերու յաւելումով զօրացած, կրնար իր նպատակներուն իրապօր-  
ծումը յառաջ տանիլ ժան-կուժոն փողոցի եկե-  
ղեցատան մէջ : »

Այս տողերը շատ լաւ են, բայց մէկ թե-  
րութիւն մը ունին. — այն է որ չափազանց  
ուշ երեւան կուգան: Ասկէց գրեթէ մէկ ու կէս  
տարի առաջ, Ֆրանսական դատարանի վճռին  
հետեւանքով « տխուր տիպարներուն » ջախ-  
ջախուելէն անմիջապէս յետոյ՝ Դիւանին Ատե-  
նապետը Պ. Իսկէնտէր Միութեան բոլոր ան-  
դամները նամակով հրաւիրեց ժողովի՝ ընկե-  
րութիւնը շարունակելու կամ չշարունակելու  
մասին որոշում տալու համար. վեց եօթ հոգի  
հազիւ եկած էին. ու չեկողներուն մէջ էր Պ.  
Չերազ ինքն ալ : Այդ օրը որոշապէս յայտնը-  
ուեցաւ թէ Հայկական Միութիւնը այդ պայ-  
մաններուն մեջ դատապարտուած էր չապրե-  
լու, ոչ միայն որովհետեւ «տխուր տիպարներ»  
անոր դէմ դաւած էին, այլ նաեւ որովհետեւ  
անոր հիմնարկութեան մասնակցող անձերէն  
ոմանք հակընդդէմ ձգտումներով ներշնչուած  
էին եւ համախոհ անդամներն ալ ուրիշ բան չէ-  
ին բերեր մեծ մասամբ բայց եթէ բարի կամե-  
ցողութիւն՝ առանց գրամական ո եւ է լուրջ  
ուժի : Այսօր, մէկուկէս տարի յետոյ, աւե-  
լորդ է կրկնել միեւնոյն փորձը : Միտնները  
պէտք չէ արթնցնել : Լաւագոյն է նորէն հիմնել  
այդպիսի մարմին մը, այնպիսի պայմաններու  
մէջ որ անոր կենսականութիւնը եւ տեւակա-  
նութիւնը ապահովեն : Թէ ի՞նչ են ըսա իս՝  
այդ պայմանները, որոշապէս գրած եմ արդէն  
այդ մասին. պէտք է որ խումբ մը համասեռ  
(homogène) անձեր, իրար ճանչցող, սիրող,  
յարգող, եւ նիւթական կամ մտաւորական  
լուրջ զոհողութիւններ ընելու կարող ու տրա-  
մազիր, իրենց ազատ կամքով ու համաձայնու-  
թեամբ, կազմեն կորիզ մը, զայն հաստատին  
առաջուց հաւաքուած գրամական կարեւոր գու-  
մարի մը վրայ, եւ յետոյ հրապարակ գան՝ գոր-  
ծելու, եւ այդ ձեւով կազմուած ընկերութիւնը  
հետզհետէ ընդարձակելու համար: Այսպէս կազ-  
մուած է Ալիսան Իսրայէլիքը, ինչպէս եւ նմա-  
նօրինակ ընկերութիւններէն շատերը : Մինչեւ  
որ այս պայմանները չլրանան, « Հայկական  
Միութեան » խոշոր ծրագրովն ընկերութիւն մը

չի կրնար յաջողիլ, եւ կամ՝ եթէ հիմնուի այդ-  
պիսի ընկերութիւն մը, փարիզի մէջ արդէն  
գոյութիւն ունեցող փոքրիկ ընկերութիւննե-  
րուն պէս սահմանափակ բան մը կը մնայ :

Գալով ընդհ. առաջնորդի խնդրոյն, Պ. Չե-  
րազ կը հրատարակէ Թարգմանութիւնը երեսուն  
եւ հինգ տարի առաջ գրած իր մէկ յօդուածին՝  
ապացուցանելու համար թէ ինքը ինձմէ շատ  
առաջ — նոյն իսկ իմ ծնելէս առաջ . . . ինչ-  
պէս կ'ըսէ — մեր մէջ ուսուալ կղերականներ  
ունենալու անհրաժեշտութիւնը փաստած էր  
արդէն . . . Պ. Չերազ պարապ յոգնութիւն  
յանձն է առեր. երբեք մտքէս չեմ անցուցած  
« ուսուալ կղերականութեան » մը անհրաժեշ-  
տութեան պէս հասարակ-տեղիք մը առաջին  
անգամ ես յայտնած ըլլալու ծիծաղելի փառքն  
ինծի վերագրել. Պ. Չերազին ծնելէն տասնչորս  
դար առաջ՝ Սահակ, Մեւրոպ եւ Վրամշապուհ  
այդ գաղափարն ունեցած եւ շատ փայլուն կեր-  
պով գործադրած են զայն: Ես միայն Եւրոպայի  
Հայոց դարգացեալ եւ կորովի, գործունեայ  
ընդհ. առաջնորդի մը պէտքն զգացուցած էի,  
եւ այդ հարցը որոշապէս հրապարակ գրած ա-  
տենս՝ ամբողջ արտասահմանեան հայ մամուլը  
ինծի ձայնակից չգտնելուս ցաւ յայտնած էի.  
ա՛յսքան: Այժմ աւելի քան ուրախ եմ՝ տեսնե-  
լով որ արտասահմանի բոլոր թերթերը համա-  
ձայն են այդ մասին: Երանի՛ թէ մեր կոչը չու-  
տով յանգէր արդիւնքի մը. եւ ատոր մէջ բո-  
լոր արժանիքը թող վերագրուի Պ. Չերազին,  
կամ . . . Սահակին ու Մեւրոպին : Արդիւնքն  
է կարեւոր, մնացեալը նշանակութիւն չունի :

Վերջապէս, Պ. Չերազ, Եւրոպայի մէջ հայ-  
կական քօլէժի մը հիմնարկութեան գաղափարին  
վրայ խօսելով, կը յայտնէ կարգ մը խորհրդ-  
դածութիւններ, որոնք շատ լուրջ են, բայց  
որոնք չեն խախտեր տեսնելու եղանակը որուն  
վրայ հիմնած էի այդ հարցին նուիրուած յօդ-  
ուածները զոր երկու երեք տարի առաջ հրա-  
սարակած եմ Անանիոսի մէջ: Այդ խնդրոյն պիտի  
վերադառնամ Անանիոսի յառաջիկայ թիւով :

Ա. 2.



Ն Ա Մ Ա Կ

### Պ. ԹԵՈՏՈՐ ՐՈՒԶՎԵԼԹԻՆ

Վսեմափայլ Տէր ,

Կորովի դիրքը զոր բռնեց այս օրերս ամերիկեան կառավարութիւնը՝ երկտրգ-Քէօչկի բռնաւորին դէմ, եւ գիւանագիտական յաղթանակը զոր Միացեալ Նահանգները տարին, խորին ուրախութիւն կը պատճառեն Հայոց, նախ՝ որովհետեւ Ապտիւլ-Համիտ դահիճին տրուած ամէն հարուած իրենց համար մեծ սիրտանք մըն է այն վայրագ մարտիրոսութեան մէջ զոր ան իրենց կրել կուտայ, եւ յետոյ՝ որովհետեւ անոնք կը յուսան որ Միացեալ-Նահանգաց կառավարութեան ձեռք ձգած առաւելութիւնները պիտի կարենան մեծապէս նպաստել իրենց կացութեան բարւոքումին: Թուրքիոյ մէջ ամերիկահպատակները մեծ մասամբ Հայ են ծագմամբ, Փոքր-Ասիոյ ամերիկեան դպրոցները իբր աշակերտ գրեթէ միայն Հայեր ունին. ամերիկեան շահերը պաշտպանելով, Միացեալ-Նահանգաց Պոլսոյ զեսպանը Հայոց շահերն ալ պաշտպանած պիտի ըլլայ:

Այն ծառայութիւնը զոր Պոլսոյ եւ Փոքր-Ասիոյ ամերիկեան դպրոցներ մատուցած են հայ ժողովրդին, անսահման է: Լոյսի, քաղաքակրթութեան վառարաններ, բարոյական եւ մտաւորական վերականգնումի ազգակիներ եղած են անոնք: Եւ մեր ժողովուրդը, զոր թուրք ընկալած ստրկութեան եւ տգիտութեան խաւարին մէջ ընկղմած էր, բայց որ միշտ ուսման, ազնիւ ու արգաւանդ աշխատութեան, ազատ ու շնորհքով կեանքի ջերմ բաղձանքը պահած էր, անհունապէս օգտուած է այն վեհանձն օգնութիւնէն զոր Ամերիկա իրեն կ'ընծայէր իր միսիոնարներուն, ուսուցիչներուն միջոցով, որոնք շարունակ ցոյց տուած են իրենց յարգանքն ու համակրութիւնը այդ ջախջախուած բայց քաղաքակրթութեան ու յառաջդիմութեան տարր մը վերստին ըլլալու միշտ ձգտող ցեղին: Ի՛նչ ուրախութիւն այդ դժբաղդ ժողովրդին համար, լքուած՝ Եւրոպայէն, որ,

հակառակ իր որոշ յանձնառութեանց, եւ ոչ իսկ լուրջ ճիգ մ'ըրաւ ջարդերը դադրեցնելու, եւ ի՛նչ փառք ամերիկեան հանրապետութեան համար, եթէ այս վերջինը իր ուսուցիչներուն ձեռքով սկսուած մտաւոր վերանորոգումի գործը լրացնէր, ստիպելով Սուլթանին կառավարութիւնը՝ կանոնաւոր ու քաղաքակիրթ վարչութիւն մը մտցնել Պետութեան այն մասերուն մէջ ուր կը գտնուի հայ ժողովուրդը: Ամերիկա, այնքան հզօր որքան ազատասէր, կարող է այդ բանն ընելու: Անկախ ու կզգիացած՝ իր հրակայական զօրութեան մէջ, ան կրնայ գործել միայնակ, երբ պատեհ վայրկեանը գայ, մինչ Եւրոպա, պառակտուած, եւ իր պառակտումներով ալլատեցած, հանգիստեա կ'ըլլայ՝ աւանց շարժում մ'ընելու՝ Սուլթանին գործած հակամարդկային ոճիրներուն: Եւրոպական ոչ մէկ տէրութիւն պիտի համարձակէր արգիլել Ամերիկան՝ եթէ ան որոշէր իրագործել, յանուն մարդկութեան, այդ ազնիւ ծրագիրը որուն գործադրումը կը պահանջեն արդէն շատ տարիներէ ի վեր Եւրոպայի բոլոր բարձր ու անշահախնդիր մտքերը:

Պաշտօնական Եւրոպային համար կատարեալ ամօթ մըն է՝ թրքական ընթերցման զարհուրելի « անաքթօնիզմ »ը պահպանած ըլլալը: Միջին դարուն մէջ իսկ, երբ մեր ժողովուրդը կիլիկիոյ մէջ թագաւորութիւն մը հիմնած էր, այդ երկիրը շատ աւելի լաւ կառավարուած, շատ աւելի ազատ, բարգաւաճ, երջանիկ էր քան այսօր, քսաներորդ դարու սկիզբը. արուեստները, գրականութիւնը կը ծաղկէին հոն. Փայտի նաւահանգիստը համաշխարհային վաճառականութեան կեդրոններէն մին էր. Արեւելքի եւ Արեւմուտքի արդիւնաբերութեանց փոխանակութիւնը Հայոց ձեռքով կը կատարուէր. մեր թագաւորները տմէն զվարութիւն կը շնորհէին Եւրոպայի վաճառականներուն որ այդ երկրին հետ յարաբերութեան կը մտնէին կամ կուզային հոն հաստատուիլ: Թուրքերը եկան, եւ, ինչպէս միշտ, հոն ալ բերին իրենց հետ մեռելութիւնը, այդ բոլոր կեանքը, այդ բոլոր բարերար գործունէութիւնը սպաննեցին: Թագաւորութեան մը վերահաստատումը չէ որ կը պահանջեն այսօր Հայերը, այլ հաստատումը ազատ ընթերցման, որմէ ամենքը կարենան օգտուիլ:

Անգամ մը որ ձեռք ձգեն լրջօրէն երաշխաւորուած ազատութիւն մը, պիտի գիտնան զարգանալ՝ յօգուտ քաղաքակրթութեան եւ յօգուտ իրենց :

Վեհանձն համակրութեան զգացումները որ միշտ ցոյց արուած են Հայոց՝ ամերիկեան ժողովրդեան կողմէ ընդհանրապէս եւ Ձեր Վսեմութեան կողմէ մասնաւորապէս, զիս կը խրախուսեն հաւատալու թէ այն երազը զոր կը փայփայեմ՝ երազ մը չէ, եւ թէ Ամերիկա, իր զլուխն ունենալով Ձեր Վսեմութեան պէս լուսամտիս եւ կորովի պետ մը, պիտի կարենայ եւ պիտի կամենայ զայն իրագործել :

Փարիզ 18 Օգոստ. 1904 Ա. ՉՊԱՆԵԱՆ

Նմանօրինակ նամակ մը ուղղուած էր Ամերիկեան Պետական Գործուղար եւ Արտաքին գործոց նախարար Պ. Հէյնն :

Նամակագիրը ընդունեցաւ հետեւեալ պատասխանը, Պ. Հէյնի քարտուղարին կողմէ :

Պարոն,

Կը փութամ ձեզ ինացնել ընդունելութիւնը, ձեր ամսոյս 18 բուականով նամակին, որով կը յայտնէ՞ ձեր գնահատումը թուրքիոյ կառավարութեան հանդէպ մեր կառավարութեան բռնած դիրքին նկատմամբ՝ վերջին դեպքերուն մէջ :

Ձեր նամակը՝ նոյն բուականով՝ ուղղուած նախագահին, ընդունեցանք նմանապէս եւ յանձնեցինք իրեն :

Նախագահը եւ Պետական Բարեօրոյարք շնորհակալութիւն կը յայտնեն ձեզի ձեր արտայայտած զգացումներուն համար, ինչպէս եւ հայ բանաստեղծութեանց հաւաքածուի երկու օրինակներուն համար զոր զրկած եք :

Եւ, Պարոն,  
Ձեր հնազանդ ծառայ  
Է՛Լ Վ՛Ի Ա. ԷՏԻ

Ռոջինկիթըն, 10 Սեպտ. 1904

Փրօ Արմ. Թերթի վերջին թիւէն կ'իմանանք թէ Փորթլէնտի մէջ, անցեալ դեկտեմբերի 11-ի օրը, տեղի ունեցեր է մեծ միթինկ մը, ամերիկացի միսիոնարներու կողմէ կազմակերպուած, ի նպատակ հայկական դատին. խօսք առած են քանի մը կարեւոր ամերիկացի անձնաւորութիւններ եւ ի վերջոյ բոլոր ներկաները միա-

ձայն հաւանութեամբ քուէարկած են հետեւեալ կորովի եւ յստակ որոշողութիւնը .

« Նկատելով որ քրեական կայսրութեան վեհապետք բոլորովին բերացաւ մեզնելու այն բարենորոգումները զոր խոստացած էր Պերլինի դաշնագրով, եւ թէ վերջերս վերսկսաւ՝ ի զայնոյք եւ ի սոսկում քաղաքակրթ աշխարհին՝ 1896ի վայրագութիւններն ու ջարդերը .

« Մենք՝ Փորթլէնտի քաղկեհներ, 1904 դեկտ. 11ի կիրակի օրը՝ մեր քաղաքացիական մեզ հաւատուած,

« Կ'որոշենք, մեր հանդարտ եւ ոչ թէ կրֆոս դատումովը, թէ մարդկայնութեան դատը, Հայաստանի մէջ եւ ամբողջ աշխարհիս մէջ, կը պահանջէ որ երկրագնիս բոլոր քրիստոնեայ մեծ պետութեանց համախոհ գործունէութեամբ, հարկաւոր է՝ կարելի եղածին չափ շուտ՝ Օսմանեան կառավարութեան մէջ մեզնել արմատական փոփոխութիւններ, ապահովելու համար պաշտպանութիւնը հայ հպատակներուն, զոր այժմ՝ սասիճանաբար բայց ապահովաբար՝ բնաջինջ կ'ընէ թուրքիոյ Սուլթան Ապս-իւլ-Համիտի բիւրս եւ սպանիչ բեթիւր :

« Կ'որոշենք որ, նկատի առնելով այս միթինկին մէջ հրապարակուած ահուելի իրողութիւնները եւ մարտիրոսացուող Հայերու ընթանիներուն եւ հասարակութեան անպատեհի բռնաւորութիւնը, պէտք է հրաւիրենք մեր կառավարութիւնն ի Ուօշինկիթըն՝ ձեռնարկելու ամեն ինչ որ կարելի է յառաջ բերելու համար քրիստոնեայ ազգերու գործակցութիւնը որպէս զի քրեական Պետութեան մէջ արդար եւ բարեացակամ կառավարութիւն մը հաստատուի եւ անհանդուրժելի բռնապետութեան մը բռնաւոր գոհները կորուստ փրկուին :

« Կ'որոշենք որ մեր այս որոշողութիւնները հաղորդուին «Քօնկրէս»ին մեր ներկայացուցչին՝ Պ. Էմոս Լ. Էլլէնին, ստիպողական պաշտօն տալով անոր Միացեալ Նահանգաց նախագահին անմիջական ուժադրութիւնը հրաւիրել անոնց վրայ : »

— Փետր. 16ի օրը Փարիզէն ուղարկուեցաւ Պ. Բուզվէլթին շնորհակալութեան նամակ մը ստորագրուած բազմաթիւ փարիզաբնակ Հայերէ :



ՏԻԿԻՆ ԲԱՐԱՆԱՆ-ԿԱՐԲՈՆԵԼ

Կրան-Փալէի մէջ կազմակերպուած արուեստագիտուհիներու ցուցահանդէսին որ այս օրերս բացուեցաւ, մասնակցած է նաեւ Տիկին Բարայան-Կարբոնել, ամենատաղանդաւոր աշակերտուհին էօժէն Քարիէր մեծանուն նկարչին եւ որ ամենանուրբ արուեստագէտներէն մին է որ մեր մէջ երեւցած ըլլան: Իր գործերը ցուցադրուած էին մասնաւոր բաժնի մը մէջ որ յատկացուած էր Քարիէրի երկու աղջիկներուն եւ մէկ քանի աշակերտուհիներուն արտադրութեանց, եւ այդ բաժնին ամենէն ուժեղ կտորներն էին՝ անտարակուսելի կերպով. մասնաւորապէս ուշագրաւ էին տարիքոտ կնոջ մը կենդանագիրը, արուեստագիտուհւոյն կենդանագիրը՝ իրմէ գծուած, հայ աղջիկ մը որ իր փոքրիկ հղբայրը պաշտպանողական զմայլելի շարժումով մը կը գրկէ, աղջիկ մը որ կը բանի, եւ քանի մը ինքնատիպ բնանկարներ: Անահիթի յաջորդ թիւերէն մէկուն մէջ մասնաւոր յօդուածով մը պիտի խօսինք Տիկին Բարայան-Կարբոնելի ամբողջ գործին վրայ:

Յ Ի Ր Ա Կ

Պ. Պ. Վահան Թէքէկանի եւ Միքայէլ Կիւրճեանի անօրէնութեամբ սկսած է հրատարակուել Աղեքսանդրիոյ մէջ գրական ամսաթերթ մը, Շիրակ: Առաջին թիւը (Յունուար) կը պարունակէ էջեր Երուանդ Օտեանի, Էժսահարի, Ա. Եարճանեանի, Ա. Արփիարեանի, Շարաւանի, Վ. Տիրանեանի, Ինճրայի, Միքայէլ Կիւրճեանի: Պ. Թէքէկան ծանօթ է իր փափուկ ու թարմ բանաստեղծութեանց նուրբ հրապոյրովը. Պ. Կիւրճեան մեր գրականութեան նորագոյն զէմքերուն մէջ ամենէն ինքնատիպներէն ու բազմալարներէն մին է, նորեկ մը որ վարպետ մըն է արդէն: Այդ երկու նրբատաղանդ գրագէտներուն առաջնորդութեամբ հրատարակուած թերթ մը կոչուած է իրական ծառայութիւններ մատուցանելու մեր գրականութեան:

Տարեկան բաժնեգինն է 15 ֆրանք:  
Հասցէ՝ Rédaction de la Revue CHIRAG  
(Egypte) Alexandrie

LES ARTS DE LA VIE

1904ի Յունուարէն ի վեր կը հրատարակուի Փարիզի մէջ գեղարուեստական ամսագիր մը, Les Arts de la Vie (կեանքի արուեստները) տիպոգրով. խմբագրապետն է Պ. Կապրիէլ Մուրէ, հանրաձանօթ գեղարուեստական քննադատը, որ Հայոցս մասնաւորապէս սիրելի է այն գեղեցիկ ուսումնասիրութեամբ զոր նուրբեց Հայկական արուեստին ու բանաստեղծութեան. կը հրատարակէ խնամալ ուսումնասիրութիւններ ժամանակակից արուեստի ամենուշահեկան երեւոյթներուն վրայ, ջատագովելով «կեանքի վրայ հիմնուած արուեստ»ին, այսինքն ճշմարիտ արուեստին ուղղութիւնը: Թերթը տպագրուած է ամենանուրբ ճաշակով: Այս տարուան Յունուարի թիւը կը պարունակէ Ա. Չօպանեանի մէկ ընդարձակ ուսումնասիրութիւնը Նահապետ Քուչակի բանաստեղծութեան մասին:

Տարեկան բաժնեգին՝ 13 ֆր. 50 ֆրանսա), 15 ֆր. (օտար կրկիրներ). — Հասցէ՝ 6, Rue de la Chaussée d'Antin, Paris.

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Պ. Տիգրան խան Քէլէկեան «Chants populaires arméniens» գրքէն երեսուն օրինակ գնելով որոշած է իբր նուէր զրկել Եւրոպացի անձնաւորութեանց եւ հայ բնակիչներէն որ հաճին մեզի տալ հասցէներ ընթերցարաններու եւ դպրոցներու, որպէս զի անոնց զրկուին այդ գրքէն օրինակներ:

Պ. Ա. Մէլիք-Ազարեանց նուիրած է տարուան մը «Անահիտ» Տոմսիկ հայ ուսանողութեան: Պ. Եփրեմ Յարութեան ծառայեան նուիրած է տարուան մը «Անահիտ» Շուրապէրու Հայոց գրագրանին: Պ. Արամ Պետրոսեան Մեհրաբեան նուիրած է տարուան մը «Անահիտ» նմանապէս Շուրապէրու գրագրան-ընթերցարանին:

Le Gérant: FRÉDÉRIC MACLER

Imp. D. DOGHRAADJIAN  
18, Rue des Gobelins, Paris.

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ԱՆԱՀԻՏ

- Թիւ 1. — Անարոյ Տրուս . եպիկուրի պարեգը , (Հատուածներ) , թարգմանեց Ա. Զօպանեան , հեղինակին կենդանագրով . Գին 1 ֆրանք :
- Թիւ 2. — Ալֆրէս սը Վիկէիի Քերբուածներ , հեղինակին կենդանագրով , թարգմանեց Ա. Զօպանեան : Գին 1 ֆրանք :
- Թիւ 3. — Օմար Խայեամի Քառեակներ , քննական ուսումնասիրութեամբ մը պարսկերէն բնագրէն թարգմանեց Գ. Փանսպի . Գին 3 ֆրանք :

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ « ԱՆԱՀԻՏ »Ի

- Թիւ 1. — Նահապէտ Բուջալիի Դիւանը , սիրոյ երգեր , խրատական եւ այլարանական երգեր , պանդուխտի երգեր . Գինական ուսումնասիրութեամբ մը հրատարակեց Ա. Զօպանեան . 3. ֆր.
- Թիւ 2. — Մկրտիչ Պեշիկաշեանի Քերբուածներն ու նաւերը , ծանօթագրութիւններով հրատարակեց Ա. Զօպանեան . 4 ֆր. 50

ՖՐԱՆՍԵՐԷՆ ԳՐԿԻՐ

LES MASSACRES D'ARMENIE, témoignage des victimes; recueil de lettres, traduites en français par A. TCHOBANIAN: préface de GEORGES CLEMENCEAU, Librairie du Mercure de France. 3 ֆր. 50

L'ARMENIE, SON HISTOIRE, SA LITTÉRATURE, SON RÔLE EN ORIENT, par A. TCHOBANIAN, avec une introduction d'ANATOLE FRANCE. Librairie du Mercure de France, 1 ֆր.

ZEITOUN, DEPUIS LES ORIGINES JUSQU'À LA GRANDE INSURRECTION DE 1895 par AGHASSI: Traduction française d'A. TCHOBANIAN: préface de VICTOR BERARD Librairie du Mercure de France. 3 ֆր. 50

POEMES ARMÉNIENS ANCIENS et MODERNES, traduits en français par A. TCHOBANIAN, et précédés d'une étude de GABRIEL MOUREY sur la Poésie et l'Art arméniens. 2 ֆր.

CHANTS POPULAIRES ARMÉNIENS, traduction française avec une introduction par A. TCHOBANIAN; préface de PAUL ADAM. Librairie Paul Ollendorff.

Ouvrage couronné par l'Académie Française 3 ֆր 50

## ԱՆԱՀԻՏ Ի բաժանորդագրութեան պայմանները

Անահիսը կը հրատարակուի ամիսը անգամ մը :

Բաժանորդագրինն է տարեկան 10 ֆրանք (Ֆրանսա), 12 ֆրանք (օտար երկիրներ 2 տոլար (Ամերիկա), 5 ռուպլի (Ռուսիա) :

Վեցամսեայ՝ 5 ֆրանք (Ֆրանսա), 6 ֆրանք (օտար երկիրներ), 1 տոլար (Ամերիկա), 3 ռուպլ. (Ռուսիա) :

Յօդուած եւ բաժանորդագրին զրկել հետեւեալ հասցէին ,

A. TCHOBANIAN

17, Rue La Bruyère

Paris

## « ԱՆԱՀԻՏ » Ի ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

Բազու	Տիկին Մարի Սունդուկեանց
Ռուսճուզ	Պարոն Գառնիկ Մաղմանեան
Գահիրէ	» Միհրան Արզարեան
Վառնա	» Զարպհանէլեան
Ֆիլիպի	» Թադւոր Հինգլեան
Նիւ-Եօրք	» Պետրոս Գաբրիէլեան
Իսթ Ութըրթաուն	» Գաբրիէլ Մուչէղեան
Սէնթըրլ Ժօլս	» Նշան Մինասեան
Զիքակօ	» Ս. Մուրատեան
Նեչուէ	» Յ. Արոզեան
Ուսթըր	» Մինաս Գաբրիէլեան
Ֆրէզնօ	» Գ. Նալպանտեան
Դաւրէթ	» Մ. Զարաֆեան
Պաթուս	» Մամաջանեան
Ֆիլատէլֆիա	» Մ. Մալխասեան
Նիւ Պրիթէյն	» Ս. Սաչաքլեան
Փրովիտէսս	» Աւագ Կարապետեան
Թիֆլիս (եւ չրջակայք)	» Սեդրակ Կիրակոսեան

(Վանքի պերիուոկ, տուն Յակոբջանեանի, N. 15)